

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԸ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

37ԴԴ. ՏԱՐԻ ԹԻԴ14 (1814) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 15, 2017
VOLUME 37, NO. 14 (1814) SATURDAY, APRIL 15, 2017



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԸ

Որու՞ն Սեղադրել

Հայաստանի խորհրդարանական ընտրությունները անցան պատմութեան: Իշխող համակարգը յաջողեցաւ վերարտադրուիլ ու յաջորդ հինգ տարիներուն եւս պիտի շարունակէ նոյն ձեւով առաջնորդել երկիրը, իսկ անցեալը ոչ միայն փայլուն չէ, այլ նոյնիսկ կարելի է ըսել աղետալի:

Ընտրություններու ընթացքին արձանագրուած խախտումներու կապակցութեամբ ուսումնասիրություններն ու վերլուծությունները կը շարունակուին եւ վերջնական պատկերացում կազմելու համար տակաւին ժամանակ է պէտք: Տեղական դիրքաւորական կազմակերպությունները արագ ստուգումներ կատարելով, արդէն իսկ յայտնաբերած են երկրորդ բացակայողներու փոխարէն քուէարկութեան հարիւրաւոր դէպքեր եւ վստահ են որ այդ քուէերը շատ աւելի բարձր են եւ ժամանակի ընթացքին պիտի կարողանան փաստել, որ այդ դէպքերը էական ազդեցութիւն ունեցած են քուէարկութեան արդիւնքներուն վրայ:

Միւս կողմէ, գոյացած ընդհանուր կարծիք կայ, որ այս ընտրություններուն մեծ դեր ունեցած է ընտրակաշառքի արատ բաժանումը եւ որոշ գնահատականներու համաձայն՝ ժողովուրդի 70-80 տոկոսը, յատկապէս հեռաւոր շրջաններուն մէջ, ընտրակաշառք ստանալով քուէարկած է այդ հիման վրայ:

Այժմ Հայաստանեան մամուլին մէջ լոյս կը տեսնեն հրապարակումներ, թէ ինչպէս Հանրապետական կուսակցութեան պարտուած անհատ թեկնածուներ կը փորձեն իրենց տուած ընտրակաշառքը ետ պահանջել քուէարկողներէն դժգոհելով որ իրենց գիւղէն խոստացուած քանակի ձայներ չեն տրուած իրենց: Կը պատմուի նաեւ որ, կարգ մը թեկնածուներ խոստացած են վճարումները կատարել ընտրություններէն ետք, իսկ յաջողութեան չհասնելով, այժմ կը մերժեն կատարել իրենց խոստումը:

Այս իրողություններու լոյսին տակ, շատեր սկսած են մեղադրել նաեւ ժողովուրդին, որ դժգոհելով հանդերձ իրենց վիճակէն, քսան տոկոսով վաճառելով իրենց ձայնը, կը նպաստեն նոյն իրավիճակի շարունակութեան:

Արդարացի է արդեօք տարեց ու աղբատ ժողովուրդը մեղադրել կաշառք վերցնելու մէջ, երբ անոնք կը գտնուին ոչ միայն տնտեսապէս անպահով վիճակի մէջ, այլ նաեւ՝ գիւղապետերու, քաղաքապետերու, մարզպետներու ամբողջական ենթակայութեան տակ են:

Ըտրակաշառքի երեւոյթին միակ պատասխանատուները դարձեալ կը հանդիսանան իշխանութիւնները, որոնք ժողովուրդը հասցնելով այսօրուայ վիճակին, ընտրակաշառքի մէջ կը գտնեն իրենց յաջողութեան միակ բանալին:

«ՄԱՍԻՍ»

Հայաստանի Ընտրություններուն Առայժմ Յայտնաբերուած են Ուրիշի Փոխարէն Քուէարկութեան 800 Դէպքեր

«Քաղաքացի Դիտորդ» կազմակերպությունը յայտնաբերած է Ապրիլ 2-ի Հայաստանի խորհրդարանական ընտրություններու ընթացքին ուրիշի փոխարէն քուէարկութեան հարիւրաւոր դէպքեր:

«Քաղաքացի Դիտորդի» ներկայացուցիչ Տիգրան Եզրեան ըսած է, որ իրենք համեմատած են իրենց կայքէջէն վրայ նախապէս արձանագրուած 10 հազար քաղաքացիներու տուեալներ, որոնք յայտարարած էին, որ իրենք պիտի չմասնակցին քուէարկութեան: «Համադրել ենք 2009 տեղամասից միայն մօտ հարիւր տեղամասի տեղեկանքները տուեալների հետ եւ բացայայտել ենք, որ նախապէս քուէարկութեանը չմասնակցելու մասին յայտարարութիւն տուած տասը հազար հոգուց 800-ի փոխարէն քուէարկութիւն է կատարուել», յայտնած է Եզրեան:

Վարդօք ընտրություններուն չերթալու մասին յայտնած 10 հազար քաղաքացիներէն նախաձեռն-

նութեան անդամները տակաւին միայն մէկ մասի տուեալները կրցած են ստուգել. - «Այս համակարգից դուրս, այս հաշուարկի մեթոտներից դուրս մօտաւորապէս մի 4-5 հոգու կողմից եւս հազանգեր ենք ստացել իրենց կամ Հայաստանից բացակայող իրենց ազգականների փոխարէն քուէարկութիւնների վերաբերեալ»:

«Իրաւունքի Եւրոպա» կազմակերպութեան իրաւախորհրդատու Եզրեան, չի ենցնելով, որ ուրիշի փոխարէն քուէարկութիւնը պատժելի է Քրէական օրէնսգիրքով, այնուամենայնիւ ընդգծած է, որ առաւել կարեւոր է գնահատել նման դէպքերու հնարաւոր համակարգային բնոյթը եւ ազդեցութիւնը ընտրություններու արդիւնքներուն վրայ. - «Այսպիսի հարցի խորքային եւ արդիւնաւէտ քննարկումը Կեդրոնական ընտրական յանձնաժողովի վրայ է դրուած,

Շար.ը էջ 5

Մեծարանքի Յիշարժան Երեկոյ Ի Պատիւ Տիգրան Սարաֆեանի Ազգային-Հասարակական Գործունէութեան 65-Ամեակին



Յոբելեար՝ Տիգրան Սարաֆեան շրջապատուած Պէլյանցիներով

Հ.Մ.Մ.ի Լոս Անճլէսի մասնաճիւղն ու Պէլյանի Հայրենակցական Միութիւնը միացեալ միջոցառում մը կազմակերպելով արժանաւորապէս մեծարեցին իրենց սիրեցեալ անդամը՝ Տիգրան Սարաֆեանը, առ ի գնահատութիւն իր 65 տարիներու բեղումնաւոր ծառայութիւններուն:

Արդարեւ, Ապրիլի 9ին, 2017 Պրապէնքի Առաջնորդարանի Թանգարանի «Ջորախան» սրահը նեղ կու գար ընտրեալ հասարակութեան: Ներկայ էին Արեւմտեան թեմի Հայց. Եկեղեցուց առաջնորդ Գեր. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Վահէ Արք. Յովսէփեան, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Համ-

բիկ Սարաֆեան, Արեւմտեան ԱՄՆի ՄԴՀԿ վարիչ Մարմնի ատենապետ Գրիգոր Ստանեան, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամներ Վազգէն Ստանեան, Վազգէն Գալթագճեան եւ Խաչիկ Քէշիշեան, Հովիվուտի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցուց Հովիւ Արթ. Տ. Մանուկ Աւ. Քհնյ. Մարգարեան, ՌԱԿԻ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան ատենապետ՝ Տօքթ. Ռաֆի Պալեան, ինչպէս նաեւ Հ.Մ.Մ.ի Պէլյանի եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ, տարբեր կառույցներու անդամներ:

Բացման խօսքով ելոյթ ունե-

Շար.ը էջ 6

«Անոնց, Որոնց 100 Տարի Առաջ Ծովը Նետեցինք, Իրենք Են Հիմա «Ոչ» Ըսողը Սահմանադրական Փոփոխություններուն».

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէի վերաբերեալ իզմիրի մէջ տեղի ունեցած հանրահաւաքի ժամանակ ելոյթ ունեւորով ըսած է փոփոխութիւնները մերժողներուն անոնք են, որոնք ծով կը նետէին 100 տարի առաջ: Այն անոնց պաշտպանները այսօր «ոչ» կ'ըսեն եւ իրենց ձիերն ու շունները կը ձգեն «այդ» ըսողներուն վրայ:

Էրտողան յայտարարած է, թէ «իրական հիւանդը» Եւրոպան է: Անոր կարծիքով՝ Եւրոպայի տնտեսութեան վիճակը երթալով կը վատթարանայ: «Անոնք վարակուած են ռասիզմի վարակով: Այս անգամ անոնց վիճակը ծանր պիտի ըլլայ», - ըսած է Թուրքիոյ նախագահը: ան նաեւ կարծիք յայտնած է, թէ եւրոպական երկիրները ճնշում կը գործադրեն ծագումով թուրք քաղաքացիներուն վրայ:

Յիշեցնենք, որ ըստ թրքական պաշտօնական պատմագրութեան՝ 1922-23 թուականներուն քեմալական շարժման ժամանակ թուրքերը Պոսֆորի Չուրեր նետած են «քրիստոնեայ գաւթիչները»՝ իբրեւ կայսերապաշտ բռնակալութեան դէմ պայքարի դրսեւորում:

Երեք Հայեր Ընտրուեցան Կլէմտիկ Քաղաքապետական Խորհուրդի Անդամ

Ապրիլ 4-ին տեղի ունեցած ընտրություններու ընթացքին Վրէժ Աղաճանեան, Արա Նաճարեան եւ Զարեհ Սինանեան ընտրուեցան Կլէմտիկ Քաղաքապետական Խորհուրդի անդամ:

Քաղաքապետարանի երեք բաց աթոռներուն համար պայքարող տասը թեկնածուներուն մէջէն Արա Նաճարեան ստացաւ 8305 ձայն, Զարեհ Սինանեան՝ 7892 ձայն, իսկ Վրէժ Աղաճանեան 7885 ձայն:

Վրէժ Աղաճանեան առաջին անգամ ըլլալով ընտրուեցաւ Խորհուրդի անդամ, մինչ առաջին երկուքին համար վերընտրութիւն էր իրեն նախկին պաշտօններուն վրայ:

Նկատի առնելով որ, վարդան Կարապետեան կը շարունակէ պաշտօնավարման իր շրջանը, այսպիսով Քաղաքապետական Խորհուրդի 5 անդամներէն 4-ը կը դառնան հայեր:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պապան Ձեր Յամար Մի Բան Կանի

ՀԱՅԿ ԴԱԻԹԵԱՆ

Լրատուամիջոցներում տեղեկություններ են հրատարակում այն մասին, որ որոշ ռեյտինգային թեկնածուներ, ովքեր ընտրությունների կողմնակից ընտրակաշառք են բաժանել, սակայն համապատասխան թուով ձայներ չեն ստացել, այժմ փորձում են ետ ստանալ իրենց փողերը:

Օրինակ՝ aravot.am-ի Շիրակի մարզի Բասեն գիւղից ստացած տեղեկությունների համաձայն՝ պատգամաւոր չղարձած ՀՀԿ թեկնածուներից մէկը չեա է պահանջում իր տուած ընտրակաշառքը: Այստեղ եւս, ինչպէս եւ Գիւմրու Անի թաղամասում, թեկնածուի շտաբի աշխատակիցները, ցուցակները ձեռքներին, տնտուսն ընկնում ու չեա են պահանջում մէկ ձայնի համար տուած 10 հազար դրամը: Եւ երբ բնակիչները հրաժարուած են վերադարձնել, թեկնածուի շտաբի աշխատակիցները սպառնում են 10 հազար դրամի դիմաց գոչ տանել տնից:

Շիրակի մարզում, ինչպէս յայտնի է, ՀՀԿ ռեյտինգային թեկնածուներից յաղթել են ԱԺ ներկայ պատգամաւոր Արման Սահակեանն ու Շիրակի նախկին մարզպետ Ֆելիքս Յոլակեանը: Մինչդեռ գաղտնիք չէ, որ Շիրակից պատգամաւոր դառնալու ուղղութեամբ լուրջ աշխատանք էր տանում նաեւ ԲՀԿ նախկին պատգամաւոր Մարտուն Գրիգորեանը, ով այս ընտրութիւններում առաջադրուել էր ՀՀԿ-ի կողմից: Գիւմրիում տարածուած խօսակցութիւնների համաձայն՝ Մարտուն Գրիգորեանը ընտրութիւնների համար խոշոր վարկ է վերցրել եւ այժմ փաստօրէն մասնադատ չի ստացել, սակայն վարկը

մնացել է նրա վրայ:

Ծանր կացութեան մէջ են յայտնուել նաեւ նախկին բնապահպանութեան նախարար Արամ Հարութիւնեանը, ԱԺ պատգամաւորներ Վարդան Ալվազեանը, Յակոբ Յայրքեանը /թունելի Յակոբ/, նախկին պատգամաւոր Տիգրան Արզաքանեանը, որոնք թէեւ խորհրդարան չեն անցել, սակայն բաւական լուրջ քուէներ են ապահովել: Արամ Յարութիւնեանը, օրինակ, 10 հազարից աւել ձայն է ստացել: Եթէ հաշուենք, որ մէկ ձայնի համար նուազագոյնը 10 հազար դրամ գումար է վճարուել, ապա կը ստացուի, որ թեկնածուն շուրջ 100 մլն դրամ գումար է կորցրել: Նման խնդիր ունեն օրդիր ՀՀԿ-ականներից Առաքել Մովսիսեանը, ԲՀԿ-ական Նապոլէոն Ազիզեանը. մի խօսքով՝ անունները բաւականին շատ են:

Նախօրէին «Ազատութիւն» ռադիոկայանի եթերում, պատասխանելով լրագրողի հարցին, թէ ինչ ճակատագիր են ունենալու այս կարգի թեկնածուները, այս թուում նաեւ Առաքել Մովսիսեանը, ՀՀԿ խօսնակ էդուարդ Շարմազանովը նշել է. «Հանրապետականը մէկ ընտանիք է, մէկ միասնական ընտանիք է, որտեղ ընտանիքի անդամների դերն ու նշանակութիւնը մանդատով չի որոշուած: Առաքել Մովսիսեանը մեր եղբայրն է, մեր ընկերն է, մեր կուսակցական ընկերն է, ազգային ազատամարտի հերոսներից մէկն է, եւ մենք հպարտ ենք, որ ինքը մեր կուսակցութեան անդամ է, եւ հպարտ ենք բոլոր այն դերակատարներով, ովքեր որ ձայն են ապահովել Հայաստանի հանրապետական կուսակցութեանը: Ես

Շար.ը էջ 19

Shad Իրավիճակ Սերժ Սարգսեանի Յամար

ԿԸՀ-ն երէկ ամփոփեց Ապրիլի 2-ի քուէարկութեան արդիւնքներն ու ստորագրեց արձանագրութիւնը, որով Ազգային ժողովը համարուած է ընտրուած: Յայտնի է կուսակցութիւնների ու դաշինքների ստացած մանդատների թիւը: ԿԸՀ-ն այդ նիստում նաեւ մերժել է ՀԱԿ-ՀԺԿ դաշինքի դիմումը, որով պահանջուած էր անվաւեր ճանաչել ընտրութեան արդիւնքը:

ՀՀԿ-ն ստացել է մեծամասնութիւն՝ 58 մանդատ, թէեւ բաւարար էր նաեւ 54-ը: ՀՀԿ-ն կողմից խաչի կարիք չունի եւ կարող է միանձնեայ ձեւաւորել կառավարութիւն: Կը լինի կողմիցիա, թէ ոչ, կը պարզուի մօտ ապագայում:

Սերժ Սարգսեանն, այսպիսով, հասաւ իր ուզածին՝ մէկ փուլով մեծամասնութիւն եւ ընտրութեան արդիւնքների ճանաչում: ԱՊՀ ու ՌԴ դիտորդները, ինչպէս միշտ, բարձր են գնահատել հայկական ընտրութիւնները: Արեւմտեան դիտորդները նոյնպէս ճանաչել են ընտրութեան արդիւնքները, եւ Սերժ Սարգսեանը ստացել է նոր իշխանութեան ձեւաւորման քարտ բլանշ:

Սակայն կայ մի կարեւոր հանգամանք, որն առայժմ այդքան էլ չի շեշտադրում եւ կարող է հետեւանքներ ունենալ առաջիկայում, թէ իշխանութեան ծրագրերի, թէ ընդհանրապէս Հայաստանի իրա-

վիճակի առումով: ԵԱՀԿ դիտորդները, հրապարակելով իրենց նախնական գեկոյցը, նշել են, որ ընտրութիւնն ընդհանուր առմամբ լաւ կազմակերպուած է եղել, ընտրակեղծարարութեան քանակն ու «տեսականին» նուազել է, սակայն կան «ընտրողներին գնելու արժանահաւատ տեղեկութիւններ»: ԵԱՀԿ-ն նշում է նաեւ, որ ընտրութիւնն արտաայտել է Հայաստանի ժողովրդի կամքը:

Այս գնահատականը կրկնել են ԱՄՆ-ն ու Եւրամիութիւնը Հայաստանի խորհրդարանի ընտրութեան կապակցութեամբ արուած յայտարարութիւններում:

Թուում է ամէն ինչ գրեթէ իտէալական է իշխանութեան համար: Նախորդ դէպքերում արեւմտյան գործընկերները սովորաբար թուարկում էին կեղծիքները եւ նշում, որ հերթական ընտրութիւնը «բայլ առաջ» է նախորդի համեմատ: Այս անգամ սակայն շեշտադրուած է ընտրակաշառքը եւ ամենակարեւորը՝ ընտրութեան արդիւնքն արտաայտում է ժողովրդի կամքը:

Փաստացի, արձանագրում է, որ Հայաստանում կողումպացուած է ոչ միայն իշխանութիւնն ու քաղաքական համակարգը, այլեւ հանրութիւնը: Սա արդէն իսկ նման

Շար.ը էջ 19

Յետաքրքիր Իրավիճակ Երեւանում Ինչո՞ւ է Իշխանութիւնը Մնացել Մեռակ

ՍՈՒՍԱ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Եւ այսպէս, Երեւանի քաղաքապետի ընտրութիւնը ստացուած է երեւի թէ աւելի հետաքրքիր, քան կարելի էր պատկերացնել խորհրդարանի ընտրութիւնից առաջ: Քաղաքապետի ընտրութեանը կը մասնակցի ընդամենը երեք ուժ, որոնցից միայն մէկը կը լինի իշխանութիւն: Սա իսկապէս արտառոց վիճակ է, անսխաղբայ: Իշխանութիւնը հանդէս կը գայ մէկ դէմքով՝ ՀՀԿ: Ընդդիմութիւնը կներկայանայ «Ելք» դաշինքով ու «Երկիր Ծիրանի» նորաստեղծ կուսակցութեամբ, որի հիմնադիրը նախկին ժառանգական Ջարուհի Փոստանջեանն է:

Քաղաքապետի ընտրութիւններին մասնակցելուց հրաժարուեցին խորհրդարան չանցած միւս ուժերը, ինչը երեւի թէ զարմանալի էլ չէր: Աւելի անսպասելի էր այն, որ քաղաքապետի ընտրութեանը մասնակցելուց հրաժարուեցին ՅԶԴ-ն ու ԲՀԿ-ն: Ներկայումս դժուար է ասել՝ նրանք այդպիսով օգնեցին ՀՀԿ-ին, թէ՞ դրեցին աւելի դժուար կացութեան մէջ՝ թողնելով ըստ հուսանքները ընդդիմադիր ուժերի դէմ մեն մենակ: Այս հարցի պատասխանը կը տայ ընտրարշաւը եւ ընտրական արդիւնքը, որ կը գրանցի Կենտրոնական ընտրական լանձնաժողովը:

Երեւանում սովորաբար ընդդիմութեան շանքերը աւելի բարձր են գնահատուած՝ նկատի ունենալով այն, որ այստեղ թէ՛ քաղաքացիական հասարակութեան ներկայացուածութեան տեսակարար կշիռն է շատ, թէ՛ բնակչութեանը տարբեր խողովակներով ճնշելու եւ հաքեկելու հնարաւորութիւնները: Միւս կողմից՝ այս ամէնն, իհարկէ, ընդամենը համապետական մասշտաբի համեմատ, որովհետեւ խորհրդարանական նախորդ երկու ընտրութիւններում, այսպէս ասած, ընդդիմադիր ուժերը կրել են բաւական շօշափելի պարտութիւն: Նօսքը թէ 2009 թուականին ՀԱԿ մասին է, թէ 2013 թուականին «Բարեւ Երեւանի» կամ, ըստ հուսանքների, «Ժառանգութեան»: Նրանք գրաւել են երրորդ տեղը, ընդ որում՝ բաւական ցածր արդիւնքով:

Սրան գուզահեռ, սակայն, նախորդ երկու ընտրութիւններում ընդդիմութեան դէմ եղել է ոչ միայն ՀՀԿ-ն, այլ նաեւ ԲՀԿ-ն, եւ թերեւս առաջին հերթին ԲՀԿ-ն, որը զբաղեցրել է երկրորդ տեղը: Թե ինչ է ԲՀԿ-ն, ինչ ուսուրսային բազա ունի, ինչի վրայ են հիմնուած ԲՀԿ ձայները՝ վաղուց յայտնի է, եւ անկախ այդ ամէնի հանդէպ վերաբերմունքից ու գնահատականից՝ փաստն այն է, որ ԲՀԿ-ն միշտ եղել է երկրորդը եւ անկասկած իր վրայ վերցրել ընդդիմադիր ընտրականագուածի ձայնը: Այն, ինչ ԲՀԿ-ն արել է նաեւ համապետական ընտրութիւններում:

Այս անգամ փաստօրէն ԲՀԿ-ն չի մտնում խաղի մէջ: Այսինքն՝ չկայ այն բուժերը, որը նաեւ Երեւանի ընտրութեանն էր ծածկում իշխանութեան «մէջքը»: Դա նշանակուած է արդեօք, որ այս անգամ Երեւանում իշխանութեան մէջքը մնում է բաց: Եթէ՛ այո, ապա դա կը նշանակի, որ Երեւանի ընտրութեանը չմասնակցելու որոշումը Գազիկ Ծառուկեանի, այսպէս ասած, ընդդիմադիր որոշումն

է ՀՀԿ-ի դէմ: Այսինքն՝ Ծառուկեանն այս անգամ որոշել է «չպահել» ՀՀԿ-ին, չլինել բուժեր:

Կարո՞ղ է արդեօք սա պայմանաւորուած լինել խորհրդարանի ընտրութիւնից յետոյ ստեղծուած վիճակով, երբ «Ծառուկեան» դաշինքը զբաղեցրեց երկրորդ տեղը, յայտարարեց, թէ ընդդիմութիւն է, սակայն այդ հանգամանքը շատերն են դնում կասկածի տակ: Եւ հիմա հրաժարուելով այս անգամ էլ Երեւանում պահել ՀՀԿ-ին՝ Ծառուկեանը փորձում է ցոյց տալ, որ ընդդիմութիւն է:

Հարցերը, իհարկէ, շատ են եւ հայաստանեան իրավիճակին բնորոշ չունեն միարժէք պատասխաններ: Ի վերջոյ՝ հարց է առաջանում, թէ ինչ է անելու ԲՀԿ ռեսուրսը Երեւանում: Այսինքն՝ արդեօք «Բարգաւաճ Հայաստան»-ը ոչ միայն դէ իւրէ, այլ նաեւ դէ ֆակտո չի մասնակցելու Երեւանի ընտրութեանը: Թէ՞ չմասնակցելով դէ ժուրէ՞՝ ԲՀԿ ռեսուրսը, այնուամենայնիւ, դէ ֆակտո կը մասնակցի յօգուտ ՀՀԿ-ի:

Ահա այս ամէնի համատեքստում էլ երեւի թէ աւելորդ չէ հարցը, թէ ինչ է պատրաստել իշխանութիւնը այս անգամ ընտրութեանը ներկայանալով մէկ դէմքով, այսպէս ասած՝ մնալով ընդդիմութեան դէմ մեն մենակ: Դժուար է պատկերացնել, որ իշխանութիւնը չի կարողացել ապահովել բազմազան մասնակցութիւն եւ այդպիսով փոշիացնել ընդդիմադիր ձայները, ապակենտրոնացնել դրանք: Կասկած չկայ, որ ցանկութեան դէպքում իշխանութիւնը կը գտնէր այդպիսի ուժերի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՐԷԱԶԱՊԱԴԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Թեևերս Կը Սոթտեմ Երեւանի՝ Բոլոր Ժամանակներու Լաւագոյն Քաղաքապետը Դառնալու Համար»։ Նիոլ Փաշինեան

«Եւք» դաշինքի ատենադպրոցներէն Նիկոլ Փաշինեանը ֆէյսպուքեան իր էջի վրայ լուսանկար հրատարակած է՝ գրելով, որ կը պատրաստուի դառնալ Երեւանի լաւագոյն քաղաքապետը:

«Թեևերս քշտում եմ Երեւանի՝ բոլոր Ժամանակների լաւագոյն քաղաքապետը դառնալու համար:

«Սա կը լինի իմ յարգանքի տուրքը Երեւանի պատմութեան բոլոր լաւագոյն քաղաքապետներին եւ մեծագոյն վարպետին՝ Ալեքսանտր Թամանեանին:

«Երեւան ճան, Եւք կա՞յ», - ըստած է գրառման մէջ:

Նշենք, որ Երեւանի աւագանիի ընտրութիւնները տեղի պիտի ունենան Մայիսի 14-ին: Այդ ընտրութիւններուն կը մասնակցի երեք քաղաքական ուժ՝ ՀՀԿ-ն, որու քաղաքապետի թեկնածուն Տարօն Մարգարեանն է, «Եւք» դաշինքը, որու քաղաքապետի թեկնածուն Նիկոլ Փաշինեանն է եւ «Երկիր Միասին» կուսակցութիւնը, որու թեկնածուն Զարուհի Փոսթանճեանն է:

«Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Ռաֆֆի Յովհաննիսեանի յայտարարութիւն մը հրատարակելով յայտարարեց որ, կը գորակցի ընդդիմադիր ուժերուն:

«Նախընտրական շրջանում բռնութիւններով եւ քաղաքական բանտարկութիւններով, իսկ ընտրութիւնների օրը՝ համատարած կաշառքներով եւ այլ զանգուածային ընտրակեղծիքներով մթազնած խորհրդարանական ընտրութիւնները հերթական անգամ ի



Երեւանի քաղաքապետի թեկնածու՝ Նիոլ Փաշինեան

ցոյց դրեցին գործող իշխանութեան՝ ՀՀԿ-ի մօտ ազատ, արդար եւ օրինական ընտրութիւնների կազմակերպման քաղաքական կամքի բացակայութիւնը:

«Ամէն դէպքում՝ մեր ժողովրդի ձայնը չմասնատելու նպատակով հերթական անգամ «Ժառանգութիւնը» յայտ չներկայացրեց Երեւանի աւագանու ընտրական մրցապայքարի մէջ մտնելու՝ փոխարէնը յաջողութիւն եւ օրինական մրցակցութիւն մաղթելով բոլոր թեկնածուներին եւ իր գորակցութիւնը՝ ընտրութիւններին մասնակցող ընդդիմութեանը եւ Հայաստանի քաղաքացու ազատ եւ անկաշառ կամարտաչափութեանը», ըստած է Ռաֆֆի Յովհաննիսեանի յայտարարութեան մէջ:

«Քարոզարշալի ետեւան Դերակատարը Ապառիկ Ընտրակաշառքն էր»

«Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցութեան ղեկավար Արշակ Սադոյեանի կարծիքով յետընտրական լուրջ զարգացումներ տեղի պիտի չունենան եւ ան գիտէր, որ Աժ ընտրութիւնները կ'ընթանային նախապէս գծազրուած ուղիով, եւ իշխանութեան կամ մօտեցումներու փոփոխութիւն ընտրութիւններու հետեւանքով տեղի չ'ունենար:

«Դրական միտումներից էր ընտրութիւնների ընթացքի տեխնիքական յազմեցումները: Մի հանգամանք էլ, որի վրայ ուշադրութիւնը չդարձուեց, դա այն էր, որ ընտրութիւնները օգտագործելով, պետութիւնը կարողացաւ շատերի մատնահետքերը ճշդել», - ըսած է ան մամուլի ասուլիսի մը ընթացքին:

Ա. Սադոյեանի կարծիքով, Աժ ընտրութիւնները ընթացքը ցոյց տուաւ, որ շատ կուսակցութիւններ կը մտածէին, որ «ժողովրդի յիշողութիւնը կարճ է», սակայն այն որ շատերը չկրցան վերընտրուիլ, կ'ապացուցէ, որ «ժողովրդին այնքան էլ հեշտ չէ խաբել»:

Ըստ Անուր, նախընտրական քարոզարշալին էական դերակատարութիւն ունէր ոչ թէ «կանխիկ», այլ «ապառիկ» ընտրակաշառքը «Այսինքն, խոստումը, որը խաբելու, զգելու հնարաւորութիւն է ստեղծում, բայց, քանի որ դա մեր երկրում աւանդույթ է՝ փրոպէս

չկայ», - ըսած է Ա. Սադոյեանը: Ըստ անոր, «Եւք» դաշինքի անցնելը ապացուցեց, որ մարդիկ, որոնք լաւ գիտեն, ովքեր իրապէս կը խաբեն, ովքեր դեռ չեն խաբած կամ չեն պատրաստուի խաբել՝ ձայնը տուին «Եւքին»:

Իսկ ընդդիմութիւնը դիմա՞ծ էր ապառիկ ընտրակաշառքի հնարաւորութեան.

«Այո, եթէ ընդդիմութիւն համարենք «Մառուկեան դաշինքը», քանի որ ունենալով հնարաւորութիւն նա կը կատարի իր խոստումները, որոշ չափով «ՀՅԴ» կուսակցութիւնը, բայց «Եւքը» եւ ուշալ ընդդիմութիւնը դեռ իրենից ուժ չի ներկայացնում, եւ «ապառիկ ընտրակաշառքի նրա հնարաւորութիւնները շատ քիչ են, ինչի մասին բնական է ժողովուրդը գիտի»:

«Յանուն մարդկային կայուն զարգացման» ՀԳ ղեկավար Կարինէ Դանիէլեանը իր հերթին փաստեց, որ ընտրութիւններու արդիւնքով ունեցանք միաբեւեռ Աժ: «Հիմա մենք շատ թույլ բազմակարծութիւն կ'ունենանք Աժ-ում. հանրապետականը, ինչպէս որոշի՞ մեծամասնութեամբ հարցերը կ'անցկացնի: Իհարկէ, դրական է, որ հանրապետականում նոր անուններ են, բայց մենք տեսնում ենք, որ նոյն օլիգարխիկ համակարգը պահպանուեց Աժ-ում», - ամփոփած է Կարինէ Դանիէլեանը:

ՀՀԿ Կ'աջակցի Իրազեկ Քաղաքացիներու Միաւորման Դէմ Դատական Յայց Ներկայացուցած Տնօրէններուն

ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեան «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին յայտարարած է, որ իրենց կուսակցութիւնը կ'աջակցի Դանիէլ Իոաննիսեանին եւ «Իրազեկ քաղաքացիների միաւորում» կազմակերպութեան դատի տուած 30 տնօրէններու նախաձեռնութեան:

Դարձեցներու եւ մանկապարտէզներու 30 տնօրէններ պահանջած են, որ դատարանը պարտաւորեցնէ Դանիէլ Իոաննիսեանին հրապարակախօսէն հերքած զրպարտութիւն համարուող փաստացի տուեալները: Անոնք նաեւ փոխհատուցում պահանջած են՝ 2-ական միլիոն դրամ:

Ընդհանուր առմամբ 60 միլիոն դրամի եւ ներողութիւն յայցելու պահանջը Դանիէլ Իոաննիսեանը Հանրապետականի կողմէ կազմակերպուած ճնշում եւ խօսքի ազատութիւնը սահմանակէտ փորձ որակած է. - «Հանրապետական կուսակցութեան վերնախաւի որոշ ներկայացուցիչներ մեր յայտնի հրապարակումից յետոյ սրա նման մի բան խոստանում էին, կամ գոնէ ակնարկում էին, որ սենց բան անելու են: Եւ, ոնց հասկանում եմ, բոլորը կամ համարեայ բոլորը միեւնոյն փաստաբանական գրասենեակի ծառայութիւններից են օգտուում, յայցերը միանման են... Այսինքն սա կազմակերպուած ակցիա է»:

Ընտրութիւններէն առաջ «Իրազեկ քաղաքացիների միաւորում» կազմակերպութիւնը յայտարարած էր, որ հարիւրէ աւելի դպրոցներու եւ մանկապարտէզներու տնօրէններ խոստովանած են, որ ՀՀԿ-ի համար ընտրողներու ցուցակներ կազմած եւ յանձնած են մարզպետարան, թաղապետարան կամ ընտրական շտաբ: Կազմակերպութիւնը ներկայացուցած էր տնօրէններու հետ զրոյցներու ձայնագրութիւնները:

Դատարան դիմած տնօրէնները «Ազատութեան» հետ զրոյցին



«Իրազեկ քաղաքացիների միաւորում» կազմակերպութեան ներակայացուցիչ՝ Դանիէլ Իոաննիսեան

հրաժարած են ըսել, թէ ինչը զրպարտութիւն կը համարեն, խորհուրդ տալով փաստաբանի հետ զրուցել: Անոնցմէ մէկը ըսած է, թէ փաստաբանի տուեալները լրագրողները կրնան ճշդել Երեւանի քաղաքապետարանէն: Քաղաքապետարանը, սակայն, պնդած է, որ իրենք այս գործի հետ կապ չունին:

Բոլոր 30 տնօրէնները նոյն փաստաբանական ընկերութեան դիմած են, անոնց փաստաբան Յարութիւն Յարութիւնեանը «Ազատութեան» հետ զրոյցին ըսած է, որ իրենց դիմած են, քանի որ քանի մը տնօրէններու հետ անձամբ ծանօթ են. - «Յետագայում այլ տնօրէններ եւս, իրենց հետ կապեր ունենալով, քննարկելով որոշեցին մեր ընկերութեանը դիմել: Ուղղորդել, բան, նմանատիպ իրավիճակ միանշանակ չկայ»:

Փաստաբանի խօսքով, տնօրէններու հայցը անհատական է գանոնք կը պնդեն, որ իրենց զրպարտած են, քանի որ հրապարակուած ձայնագրութիւնները յօդուածին կցուած եղած են, ուր կ'ըսուի է, թէ Հանրապետական կուսակցութիւնը կը չարաշահէ վարչական միջոցը:

Որքան Մարդ Լքած Է Հայաստանը Վերջին Երեք Տարիներուն

Հայաստանէն գաղթի հոսքերը ընդհանուր առմամբ նուազած են, սակայն աճած է անվերադարձ մեկնողներու թիւը: Այս մասին լրագրողներու թիւը: Այս մասին լրագրողներու հետ հանդիպման նշած է «Վերադարձ եւ պաշտպանութիւն» սոցիալ-իրականայն ՀԿ նախագահ Տաթևիկ Բեժանեան: Ան ներկայացուցած է վերջին երեք տարիներուն արտագաղթի եւ ներգաղթի տուեալները՝ ըստ իրենց հետազօտութեան, խօսած է փոխանցումային հոսքերու նուազման պատճառներու ու հետեւանքներու մասին:

Անոր խօսքով՝ գաղթի տեղաշարժի մէջ մեծ տոկոս կազմած է երկարաժամկետ աշխատանքային գաղթի համար մեկնողներու եւ անվերադարձ մեկնողներու թիւը:

«Տարեկան կտրուածքով՝ երկրից անվերադարձ հեռանում է 35 հազար մարդ, սակայն 2016 թուականին անվերադարձ մեկնողների թիւը զարձաւ 37 հազար: Նրանց 47 տոկոսը կազմում են աշխատանքային միերկրանները, իսկ մշտականը՝ 53 տոկոսը: Միտում է նկատում նաեւ բարձր որակաւորում ունեցող մասնագէտների արտահոսքի: Յուսադրող չեն տուեալները, քանի որ

միտումը ցոյց է տալիս, որ կարող է կրկնուել 90-ականների սկզբի իրականութիւնը, այսինքն՝ ուղեղների արտահոսք», - նշած է Բեժանեան:

Անոր հաւաստումամբ՝ Հայաստանէն աշխատանքային գաղթողներու հիմնական հոսքը կ'ըլլայ դէպի Ռուսաստան: Ըստ որուն՝ վերջին տարիներուն աշխատանքային գաղթողներու հոսքը նուազած է, բայց այդ պայմանաւորուած է ոչ թէ Հայաստանի ընկերային-տնտեսական վիճակի բարելաւմամբ, այլ Ռուսաստանի տնտեսութեան թուլացումը: Բեժանեանի խօսքով՝ ընդհանուր գաղթի տարիքը 25-54 տարեկանն է, այսինքն՝ վերարտադրողական տարիքն է:

«Միկրացիոն հոսքերի նուագումը բերել է թրանսֆերթների նուագում, ինչը նոյնպէս պայմանաւորուած է արտաքին գործօններով՝ ՌԴ տնտեսութիւնը վերջին տարիներին վատթարացել է, ուուբլու քուրան ընկել է: Նուագել են նաեւ առողջապահութեան եւ կրթութեան վրայ ծախսուող գումարները», - ընդգծած է Տաթևիկ Բեժանեանը՝ աւելցնելով, որ փոխանցումներու 80 տոկոսը կենցաղային խնդիրներու լուծման համար ծախսուած են:

ԼՈՒՐԵՐ

Դատարանը Դադրեցուցած է Տիարպեքիթի Սուրբ Կիրակոս Եկեղեցու Պետականացման Գործընթացը



Թուրքիոյ վճռաբեկ դատարանը որոշում կայացուցած է դադրեցնելու Տիարպեքիթի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու պետականացման գործընթացը:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ «Ակոս» պարբերականը, Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի փաստաբանները պետականացման դէմ հայց ներկայացուցած են վճռաբեկ դատարան՝ շեշտելով, որ եկեղեցու պետականացումը կը հակասէ օրէնքին:

«Պետականացման որոշումով արհամարհուած են նախարարներու խորհուրդի որոշումը կապուած մշակութային ժառանգութիւններու պահպանութեան հետ: Բացի վճռաբեկը նման անօրինական պետականացումները չեղարկելու վերաբերեալ դրական ընդունուած շարք մը որոշումներուն: Պետականացումը կը հակասէ նաեւ Լոզանի պայմանագրին», -

վճռաբեկը բաւարարած է Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի հայցը՝ եկեղեցու պետականացման գործընթացը կանգնեցնելու որոշում կայացնելով: Վճռաբեկի որոշման մէջ նշուած է, որ

պետականացման հետ կապուած հարցում ուղարկուած է համապատասխան մարմիններուն, սակայն պատասխան չեն ստացած, թէ ինչ հիմքերով կը պետականացնեն եկեղեցին:

Նշենք, որ Թուրքիոյ նախարարներու խորհուրդի որոշումով՝ Տիարպեքիթի Սուրբ շրջանին մէջ գտնուող բոլոր կառույցները, որոնց մէջ նաեւ Տիարպեքիթի Սուրբ Կիրակոսը, պետականացուած էին: Պատճառաբանութիւնն այն էր, որ քիւրտ գինեակներուն հետ բախումներու հետեւանքով վնասուած Սուրբ շրջանը պէտք է պետական միջոցներով վերականգնուի:

Մերձաւոր Արեւելքի ամենամեծ եկեղեցիներէն մէկուն՝ Սուրբ Կիրակոսի վերաբացումն ու օծումը տեղի ունեցած էր 22 Հոկտեմբեր 2011-ին, իսկ առաջին պատարագը մէկ օր անց՝ 23 Հոկտեմբերին:

Սուրբ Կիրակոսի վերանորոգումը իրականացուած է տիարպեքիթի հայերու եւ Տիարպեքիթի քաղաքապետարանի աջակցութեամբ:

Սուրբ Կիրակոսը վերաբացուած է որպէս գործող եկեղեցի:

Ֆրանսան Կոչ Ըրած է Կողմերուն՝ Յարգել Վիեննայի եւ Սանթ-Փետրսպուրկի Յանձնառութիւնները

Ֆրանսան վերահաստատած իր համոզմունքը, որ առկայ «ստատուս քո» պաշտպանունակ չէ, եւ որ դարբաղեան հակամարտութիւնը չի կրնար լուծուիլ ռազմական ճանապարհով: Այս մասին ըստած է Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան այսօրուայ յայտարարութեան մէջ:

«Մէկ տարի առաջ, դադրեցան ապրիլի 2-էն 5-ը Լեռնային Ղարաբաղի մէջ ծաւալուած եւ տարածաշրջանի բնակչութեան վիշտով համակած պատերազմական գործողութիւնները: Որպէս Մինսքի խումբի համանախագահ, Ֆրանսան, իր ուղիքով եւ ամերիկացի գործընկերներու հետ կեղրոնացուցած է իր ուժերը մարտերը դադրեցնելու եւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւնները վերսկսելու ուղղութեամբ», - ըստած է Ֆրանսայի արտաքին քաղաքական գերատեսչութեան մամլոյ խօսնակի յայտարարութեան մէջ, որ տարածած է Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանութիւնը:

Ֆրանսան կը վերահաստատէ իր համոզմունքը, որ առկայ «ստատուս քո» պաշտպանունակ չէ եւ որ հակամարտութիւնը չի կրնար լուծուիլ ռազմական ճանապարհով, եւ կոչ ըրած է կողմերուն՝



յարգել կրակի դադարեցման, վստահութեան մեխանիզմներու եւ բանակցութիւնները վերսկսելու մասին 2016 թուականի 16 մայիսի Վիեննայի եւ 20 յունիսի Սանթ Փետրսպուրկի գազաթնաժողովներուն ստանձնած յանձնառութիւնները:

«Վերջերս, իր հայ եւ ատրպէյճանցի գործընկերներու հետ ունեցած հանդիպումներու ընթացքին, Ֆրանսայի նախագահը վերահաստատեց հակամարտութեան բանակցուած եւ տեւական, ողջ տարածաշրջանի կայունութեան եւ բարեկեցութեան համար նպաստաւոր լուծում գտնելուն ուղղուած Ֆրանսայի լրակատար յանձնառութիւնը», - ըստած է յայտարարութեան մէջ:

«Ընտրագանգուածը Կաշառելը Կը Վնասէ Հայաստանի Վարկանիշին»։ Ըսած է ԵՄ Պատուիրակութեան Ղեկավարը



Հայաստանի մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար Փիթըր Սվիթսլսթի

Ընտրողները կաշառելն ու առուել լայն ընտրական կաշառակերութիւնը ստուերի տակ կը թողնեն Հայաստանի մէջ խորհրդարանական ընտրութիւններու ընդհանուր պատկերը: Այդ երեւոյթը կը վնասէ Հայաստանին ու երկրի մէջ ժողովրդավարական գործընթացներու զարգացման: Այս մասին Ապրիլին 11-ին Գիւմրիի մէջ լրագրողներուն յայտարարած է Հայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավար Փիթըր Սվիթսլսթին:

«Այո՛, Հայաստանը ինդիր ունի, բայց ես ապագային լաւատեսօրէն կը նայիմ: Ես իմ ամբողջ ժամանակը կը ծախսեմ վերլուծելով այն, թէ ինչպիսի գործնական մեթոտներ կարելի է ձեռնարկել՝ ապագային քաղաքական կաշառակերութեան նման գործերը կանխելու համար: Ես կը կարծեմ, որ Հայաստանի քաղաքական գործիչները պէտք է լուրջ քննարկումներ սկսին այն բանի շուրջ, թէ ինչպիսի օրինական կամ վարչական միջոցներ կրնան ձեռնարկուիլ՝ ձայները գնելն ու վարչական միջոցի օգտագործումը կանխելու համար»,- ըսած է ան:

Նշելով, որ ԵՄ դիտորդները արդէն տուած են իրենց գնահատականը ընտրութիւններու վերաբերեալ՝ Սվիթսլսթին շնորհակալութիւն յայտնած է հայ գործընկերներուն՝ Եւրոմիութեան ֆինանսաւորուած նախազիծը ներդնելու համար: Ներդրուած նորարարութիւններու շնորհիւ՝ հայ ընտրողները կրնան վստահ ըլլալ, որ իրենց

ձայները հնարաւոր չէ գողնալ: Իհարկէ, թեխնիկայի հետ ինչ-ինչ խնդիրներ եղած են, եւ ամէն ինչ պէտք եղածին պէս չէր աշխատեր: Սակայն դիւանագետի խօսքով՝ նման նախազիծը դեռ երբեք չէր ներդրուած այդքան կարճ ժամանակահատուածի մէջ: Ի դէպ, Հայաստանի մէջ այն աւելի լաւ գործած է, քան ԵՄ-ի մէջ կրնային սպասել եւ նոյնիսկ աւելի լաւ, քան այլ երկիրներու մէջ, ուր այն ներդրուած էր:

Ինչպէս նշած է Փիթըր Սվիթսլսթին՝ ընտրութիւններու ժամանակ ընտրողներուն կաշառելու, ճնշում գործադրելու եւ վարչական միջոցներու չարաշահման վերաբերեալ հաղորդումներ ստացած են: Բայց դեսպանը յոյս յայտնած է, որ այդ բոլոր խնդիրներով պիտի զբաղուին, եւ ապագային Հայաստանի մէջ ընտրութիւնները կ'ըլլան ազնիւ ու թափանցիկ: Այժմ, անոր խօսքով, կը վերլուծեն ձեռքի տակ եղած բոլոր տուեալները եւ աւելի ուշ պիտի ներկայացնեն իրենց վերջնական եզրակացութիւնները:

«Ժողովրդավարութիւնը գործընթաց է, մշտական շարժում եւ 2 ապրիլին կարեւոր քայլ առնուած է, այդ գործընթացը պիտի շարունակուի, այն անդառնալի է»,- ըսած է ան:

ԵՄ դեսպանը յատկապէս նշած է երիտասարդութեան աշխուժութիւնը ընտրութիւններու ժամանակ եւ շնորհակալութիւն յայտնած քաղաքացիական հասարակութեան, որ դիտորդական

Կարօ Փայլան Չաւուշօղլուէն Պարզաբանումներ Պահանջած է Թուրքիոյ ԱԳՆ-ի Արխիւներու Մասին

Թուրքիոյ քրտամէտ ընդդիմադիր «Ժողովուրդներու ղեմնկերատական կուսակցութեան» (HDP) հայ պատգամաւոր Կարօ Փայլան հետաքրքրուած է արտաքին գործոց նախարարութեան արխիւներու ճակատագրով:

Թուրքիոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակոս» թերթի կայքի համաձայն՝ արտաքին գործոց նախարար Մեւրութ Չաւուշօղլուին ուղղուած գրաւոր հարցումով Փայլան մասնաւորապէս ուզած է իմանալ, թէ ինչ փուլի մէջ են ԱԳՆ-ի արխիւներու թուայնացման աշխատանքները եւ արդեօք անոնց մէկ մասը վնասուած կամ ոչնչացուած է:

Հայ պատգամաւորը նաեւ փորձած է պարզել, թէ արդեօք այդ արխիւներուն մէջ Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանը ընդգրկող (մինչեւ 1919թ.) փաստաթուղթեր կան:

Փայլան յիշեցուցած է, որ ԱԳՆ-ի կողմէ նախապէս եղած յայտարարութեան համաձայն՝ մինչեւ 2015թ. պէտք է թուայնացուէր նախարարութեան պատկանող շուրջ 25 միլիոն փաստաթուղթ: Սակայն մինչ օրս այդ աշխատանքները չեն աւարտած:

«Եթէ նոյնիսկ մէկ կողմ թողնենք այն, որ արխիւը նշանակուած ժամկետին չէ բացուած, նաեւ տեղեկութիւններ ստացուած են, որ այդ արխիւի աշխատակիցներու մէկ մասը հեռացուած է աշխատանքէն՝ կիւլէնական ըլլալու մեղադրանքով: Իսկ այդ ընթացքին արխիւային փաստաթուղթերու մէկ մասը ոչնչացուած է: Բացի այդ, լուրեր ստացուած են, որ արխիւի հետ կապուած աշխատանքները արդէն բաւական ժամանակ դադարեցուած են, իսկ շէնքը, ուր կը գտնուին փաստաթուղթերը, Չուր լեցուած է, ինչի արդիւնքով արխիւը մեծ վնասներ կրած է»:

ԼՂ ԱԳՆ. Ատրպեյճան կը Սպառնայ Զերթական Պատերազմը Սանճագերծել

2016 թ. ապրիլեան պատե-
րագմի աւարտի կապակցութեամբ
ԼՂ Արտաքին գործոց նախարարու-
թիւնը հանդէս եկած է յայտարարու-
թեամբ, որու մէջ «ուսկանական
յանցագործութիւն» որակած է ատր-
պեյճանական կողմի գործողութիւն-
ները:

«Այսօր լրանում է ուղիղ մէկ
տարի, ինչ աւարտուեց ազրպեյճա-
նա-ղարաբաղեան հակամարտու-
թեան ուժային լուծման նպատա-
կով Ատրպեյճանի կողմից Արցախի
դէմ սանճագերծուած ուսկանական
ակրէսիան: 2016 թ. Ապրիլի 1-ի լոյս
2-ի գիշերը, կոպտօրէն խախտելով
հրադադարի ռեժիմը, ատրպեյճա-
նական զինուած ուժերը սահմանի
ողջ երկայնքով նախաձեռնեցին լայ-
նածաւալ յարձակում՝ օգտագործե-
լով ծանր զինտեխնիկա, հրետանի
եւ ուսկանական օդուժ: Միայն կենդա-
նի ուժի ու տեխնիկայի գզայի
կորուստներ կրելուց յետոյ Ատրպեյճ-
անը ստիպուած եղաւ 2016 թ.
ապրիլի 5-ին Ռուսաստանի միջ-
նորդութեամբ խնդրել ուսկանական
գործողութիւններ ղադարեցում:

Միջազգային մարդասիրական
իրաւունքի բազմաթիւ խախտում-
ներով ու ուսկանական յանցագոր-
ծութիւններով ուղեկցուած ատր-
պեյճանական ակրէսիան լուրջ մար-
տահրաւէր դարձաւ տարածաշր-
ջանային խաղաղութեանն ու անվ-
տանգութեանը եւ մեծ վնաս հասց-
րեց ԵԱՀԿ Մինսքի խմբի համանա-
խազահները միջնորդական ջան-
քերի շրջանակներում ընթացող
ատրպեյճանա-ղարաբաղեան հակա-
մարտութեան կարգաւորման գոր-
ծընթացին:

Ռազմական գործողութիւննե-
րի աւարտից յետոյ անցած մէկ
տարուալ ընթացքում ԵԱՀԿ Մինս-
քի խմբի համանախազահները ջան-
քեր էին գործադրում բանակցային
գործընթացի լիարժէք վերականգն-
ման համար պայմանների ստեղծ-
ման ուղղութեամբ:

Արցախի Հանրապետութիւնը
հետեւողականօրէն աջակցութիւն է
յայտնում ԵԱՀԿ Մինսքի խմբի
համանախազահների յայտարարու-

թիւններին, որոնք վերաբերում են
1994 թ. Մայիսի 12-ի հրադադարի
մասին համաձայնագրի լիակատար
պահպանման, 1995 թ. Փետրուարի
6-ի հրադադարի ռեժիմի ամ-
րապնդման մասին համաձայնագրի
դրոյթների գործնական կիրառ-
ման, ինչպէս նաեւ միջազգային
հետաքննութեան մեխանիզմների
ներդրման եւ ԵԱՀԿ Գործող նախա-
զահի անձնական ներկայացուցչի
զբաւեցնակի կարողութիւնների
ընդլայնման վերաբերեալ վիեն-
նայում (2016 թ. Մայիսի 16) եւ
Սանթ-Փեթերսպուրկում (2016 թ.
Յունիսի 20) ձեռք բերուած համա-
ձայնութիւնների իրագործման անհ-
րաժեշտութեանը:

Ատրպեյճանը ոչ միայն մեր-
ժում է այդ առաջարկները, այլեւ
տապալում ցանկացած նախաձեռ-
նութիւն, որն ուղղուած է ուսկան-
կան գործողութիւնների վերսկս-
ման հնարաւորութեան բացառմա-
նը: Աւելին, այս ողջ ժամանակա-
հատուածում Ատրպեյճանը չի հրա-
ժարւում փորձերից՝ տեղափոխել
առձակատման տրամաբանութիւնը
տնտեսութեան, մշակոյթի եւ նոյն-
նիսկ մարդկային շփումների բնա-
զաւուներ:

Յուզողորէլով բանակցութիւն-
ների միջոցով հակամարտութեան
խաղաղ կարգաւորմանը հասնելու
ցանկութեան լիակատար բացակա-
յութիւն՝ ատրպեյճանական իշխա-
նութիւնները սպառնում են սան-
ճագերծել հերթական պատերազմ:
Հետեւողականօրէն բարձրացնելով
լարուածութեան աստիճանն Ար-
ցախի եւ Ատրպեյճանի զինուած
ուժերի շփման գծում եւ շարունա-
կելով առձակատման ու թշնաման-
քի քաղաքականութիւնը՝ Պաքուն
նպատակաւ ուղղուած կերպով խո-
րացնում է կողմերի միջեւ անվս-
տահութիւնը եւ ձգտում ատրպեյճ-
անա-ղարաբաղեան հակամարտու-
թեան խաղաղ կարգաւորման գոր-
ծընթացը դարձնել սեփական ապա-
կառուցողական քաղաքականութեան
ու մաքսիմալիստական պահանջ-
ների պատանդը», - նշուած է ԼՂ
ԱԳՆ յայտարարութեան մէջ:

Հայաստանի Ընտրութիւններուն Առայժմ Յայտնաբերուած են

Շարունակուած է 1-էն

ինչպէս նաեւ տարած քային ընտ-
րական յանձնաժողովները: Այսպի-
սի հարցի քննարկման եւ սրա
վերաբերեալ փաստերի ձեռք բեր-
ման գործին Ընտրական օրէնսգր-
քով կարող են մասնակից դարձուել
նաեւ հանրային ծառայողներ,
ուստիկանութեան ծառայողներ»:

«Քաղաքացի դիտորդը» ստո-
րագրուած ցուցակները լրիւ ու-
սումնասիրելէ ետք կը պատրաստ-
ուի դիմել կեդրոնական ընտրա-
կան յանձնաժողով, հնարաւոր է՝
նաեւ Սահմանադրական դատա-
րան, ընդհուպ մինչեւ Մարզու
իրաւունքներու եւրոպական դա-
տարան. - «Քանի որ Ազգային
ժողով ընտրելու իրաւունքը, օրէնս-
դիր մարմինը ընտրելու իրաւուն-
քը, ըստ Եւրոպական կոնվենցիա-
յի, իրաւունք է ձանաչուած, եւ
զրա կապակցութեամբ իւրաքան-
չիւր ոք պէտք է ունենայ խախտ-
ուած իրաւունքի պաշտպանութեան
միջոց»:

Տարիներ շարունակ ընդդի-
մութեան հնչեցուցած պահանջէն
ետք, անցեալ տարի նոր Ընտրա-
կան օրէնսգիրքի մէջ ի վերջոյ
ամրագրուեցաւ ստորագրուած ցու-
ցակներու հրապարակման դրոյթը,
որու համաձայն ԿԸԹ-ն պէտք է
հրապարակէր բոլոր ցուցակները:
«Քաղաքացի դիտորդի» ներկայ-
ցուցիչը պնդած է, որ ցուցակները
հասանելի դարձած են ուշացումով.
- «Օրէնքով սահմանուած ժամկէտ
գոյութիւն ունէր. երէկ մինչեւ
ժամը 11-ը հնարաւոր էր ներկա-
յացնել այլ անձանց փոխարէն
քուէարկելու մասին հողորդում:
Սակայն, քանի որ երէկ մինչեւ
ժամը 7-ն անց կէս այդ հնարաւո-
րութիւնը՝ այդ ցուցակները ներ-
բեռնելու եւ ստուգում իրակա-
նացնելու, բացակայել է, ես կար-
ծում եմ, որ Սահմանադրութեան
2-րդ յօդուածի ապահովման շրջա-
նակներում եւ այդպիսի դրական
պարտաւորութեան շրջանակնե-
րում պէտք է դա հաշուի առնուի
եւ քննարկուի»:

Պոլսոյ «Քամփ Արմէն» Մանկատան Շինարարական Աշխատանքները սկսած են



Պոլսոյ Թուզլա շրջանին մէջ
գտնուող «Արմէն» հայկական
ամառնային ճամբարին մէջ, որ
յայտնի է նաեւ իբրեւ Հրանդ
Տինքի մանկատուն, սկսած են վե-
րակառուցման առաջին աշխա-
տանքներուն, կը յայտնէ Պոլսոյ
«Հայթերթ»-ը:

Նախապէս Կէտիկփաշայի հայ-
կական բողոքական եկեղեցւոյ հիմ-
նադրամի նախագահ Գիրգոր Աղա-
պալօղլու յայտնած էր, որ ճամբար
ի վերակառուցման նախագիծը
արդէն պատրաստ է, եւ իշխանու-
թիւններուն կողմէ սեփականատի-
րոջ հանդէպ կիրառուած սահմա-
նափակումներու վերացման ստո-
րագրութիւնը ստանալէ ետք, իրենք
պատրաստ են անցնիլ նորոգման
լայնածաւալ աշխատանքներու:

Վերակառուցուած ճամբարը
պիտի ծառայէ իբրեւ մշակութա-
յին օճախ, ուր վառ պիտի պահուի
նաեւ պոլսահայ մտաւորական Տին-
քի յիշատակը:

Յիշեցնենք, որ մօտ 2 տարի
առաջ՝ 175 օրուան դիմադրութենէ

ետք, հայ երիտասարդները կը ցան
Պոլսոյ հայ համայնքին վերադարձ-
նել Թուզլայի հայկական ճամբարի
շէնքը, որ 2015-ի Մայիսին աւեր-
ման վտանգի տակ յայտնուած էր:

Դեռ 1962-ին ան ծառայած է
իբրեւ ճամբար, ուր ամրան ամիս-
ներուն վարժարաններէն դուրս
կազմակերպուած են հայ երեխանե-
րու՝ հայկական միջավայրի մէջ
իրարու հետ շփուելու միջավայր,
ինչպէս նաեւ ծնողներ չունեցող
հայ մանուկներուն ամառային ար-
ձակուրդներու կացարան:

Սակայն 1987-ին պետութիւնը
խլած է տարածքը, ապա ճամբարի
սեփականատէրերը փոխուած են քանի
մը անգամ, եւ, ի վերջոյ, 2015-ին
տարածքի այդ ժամանակուան տէրը
որոշեց Թուզլայի մէջ առանձնատ-
ներ կառուցելու նախագիծ սկսիլ:

2015-ի Մայիս 6-ին «Արմէն»
ճամբարի տարածք մտած հողամ-
բարձ մեքենաներուն դէմ ելան հայ
երիտասարդները, որոնք ճամբար
հասնելով՝ յաջողացան կանխել ճամ-
բարի ամբողջական աւերումը:

BBC - Հայաստան. Փոքրիկ Եւրոպական Երկիր՝ Հարուստ Զոգելոր Պատմութեամբ



Բրիտանական BBC-ի կայքը
ճամփորդութիւններու մասին բաժ-
նին մէջ Հայաստանի մասին յօդ-
ուած եւ վառ լուսանկարներու
շարք հրապարակած է՝ «Եւրոպա-
կան երկիր, որ քրիստոնէութիւնը
որպէս պետական կրօն ընդունած է
301 թուականին» վերնագիրով:

Յօդուածին մէջ նշուած է, որ
Հայաստանը աշխարհի ամենափոքր
երկիրներէն է, բայց հարուստ հո-

գելոր պատմութիւն ունի, որ տե-
սանելի է մինչ օրս:

Հրապարակման մէջ նշուած է
Գրիգոր Լուսաւորիչի կեանքի մա-
սին, որ քրիստոնէութիւնը Հայաս-
տան բերած է: Յօդուածը մանրա-
մասն կը պատմէ նաեւ Գառնիի
տաճարի, էջմիածնի, Գեղարդի վա-
նական համալիրի, խաչքարերու,
Քարահունջի եւ Եղենիս գիւղի
եկեղեցւոյ մասին:

Մեծարանքի Յիշարժան Երեկոյ Ի Պատիւ Տիգրան Սարաֆեանի Ազգային-Յասարակական Գործունէութեան 65-Ամեակին



Շարունակուած էջ 1-էն

ցաւ օրուան հանդիսավար եւ Պէյ-լանի Հայրենակցական Միութեան ժրջան ատենապետ՝ Յարութիւն Ֆոտուլեան: Ան իր կազմակերպութեան եւ Հ.Մ.Մ.ի վարչութեան անունով ջերմօրէն ողջունեց հիւր անձնաւորութիւններն ու ներկայ հասարակութիւնը, որոնք եկած են միասնաբար նշելու վաստակաշատ ու նուիրեալ գործիչ Տիգրան Սարաֆեանի յօբելեանը:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին մեծարեալ Տիգրան Սարաֆեանի անձնական եւ հասարակական կեանքին նուիրուած տեսաերիզ մը, որ խնամքով ու ճաշակով պատրաստուած էր Յ. Ֆոտուլեանի կողմէ:

Տիգրան Սարաֆեանի կեանքի տարբեր հանգրուաններու վարած բեղուն գործունէութեան մասին հանգամանօրէն անդրադարձաւ ՄԴՀԿ վարիչ Մարմնի փոխ ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան: Առանձնապէս նշեց 1961-1981 թուականներուն տարած կազմակերպական տքնաջան եւ արդիւնաւէտ աշխատանքները: Արդարեւ, այդ ծաղկեալ շրջանին է որ երկու անգամ Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի խումբը դարձաւ Լիբանանի ախոյեան: 1981ին կ'ընտրուի Հ.Մ.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ եւ ձեռնամուխ կ'ըլլայ նոր շրջաններու կազմութեան (Անգլիա, Ֆրանսա, Պրագիլ, ԱՄՆ, Արժանթին, Քուէյթ): 2007ին կը հրատարակէ «ՀՄՄի Պատմութեան Հետքերով» յուշագրութեան առաջին հատորը: 1981ին կը պարգևատրուի Լիբանանի նախագահութեան շքանշանով, ընտրուած է նաեւ անդամ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան:

Գ. Մոլոյեան անդրադարձաւ նաեւ մեծարեալ Տիգրան Սարաֆեանի կուսակցական եւ ազգային-հասարակական գործունէութեան վրայ: Բարձր գնահատեց Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն համագաղութային մակարդակով իր բերած ներդրումը: Ան իր խոհեմութեան շնորհիւ, կրցաւ որոշ շրջահայեցութեամբ արժանանալ հայ եւ արաբ շրջանակներու համակրանքին ու վստահութեան: Այս իսկ պատճառով նշանակուեցաւ համագաղութային համակարգիչ մարմնի ատենապետ: Տիգրան Սարաֆեան իր այս հանգամանքին բերումով, այդ փոթորկալի տարիներուն խիստ դժուարին հարցեր լուծելու բանալի անձ մը ըլլալով կրցաւ դրական ելք գտնել բազմաթիւ հարցերուն:

Ամերիկա հաստատուելէն ետք

ան 10 տարիներ շարունակ ձեռնհասօրէն ղեկավարեց Պէյլիանի Հայրենակցական Միութիւնը:

Մեծարեալ Տիգրան Սարաֆեան պարգևատրուած է Հնչակեան կուսակցութեան բարձրագոյն շքանշանով՝ «Փարամագ» մետալով:

Սրտի խօսքով հանդէս եկաւ հանրածանօթ մտաւորական եւ «Մասիս» շաբաթաթերթի երկարամեայ գլխաւոր խմբագիր՝ Տօբթ. Արշակ Գազանձեան: Ան Տիգրան Սարաֆեանը բնութագրեց որպէս հետեւողական պայքարի մարդ մը, օր օժտուած է ազնուութեամբ, լայնախոհութեամբ ու հայ ազգին ու մշակոյթին հանդէպ ունեցած մեծ սիրով: Տիգրան Սարաֆեան իր իւրաքանչեւ ներդրումը ունեցաւ



մարզական, ազգային եւ հայրենասիրական ոլորտներէն ներս, մեծ նուիրումով փարեցաւ ազգին ու հայրենիքին ծառայելու, ինչպէս նաեւ նոր սերունդներու դիմակալած մարտահրաւերներուն դէմ պայքարելու գործին:

Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը իր երախտագիտութիւնը յայտնելով տիգրան Սարաֆեանին պարգևատրեց մեծագոյն շքանշանով «Փարամագ» մետալով:

Ներկաներուն հաճելի անակնկալ մը եղաւ երբ ուղղակի եթերային հաղորդումով, Երեւանէն հեռուստապատուին վրայ իր շնորհաւորական խօսքն ու բարեմաղթութիւնները փոխանցեց հայրենի ծանօթ անձնաւորութիւններէն եւ մեծարելի երկարամեայ բարեկամ՝ Ռոմէն Գոգմոյեանը:

Տիգրան Սարաֆեանի դուստրը ծանօթ դաշնակահարուհի Հուրի Սաթեան-Սարաֆեան ելոյթ ունենալով հետաքրքրական դրուագներ պատմեց իր հօր ընտանեկան եւ անձնական կեանքի մասին:

Կարգացուեցաւ Լիբանանի



Խորհրդարանի անդամ, պետական երեսփոխան Սեպուհ Գալբազեանի երախտագիտութեան եւ մեծարանքի խօսքը, որուն մէջ ըստուած է. «Տիգրան Սարաֆեան ՀՄՄ-եան եւ Հնչակեան Հայրենասիրական կաճառէն ստացած էր իր ազգին ծառայելու վկայականը: Աւելի քան երեք քառորդ դար մնաց պատնէշի վրայ որպէս յառաջատար, երբեմն ալ որպէս անյայտ զինուոր ի սպաս հայ ժողովուրդին, հայոց սուրբ դատին եւ հայրենիքին»:

Կարգացուեցան նաեւ շնորհաւորագրեր Պէյրութի եւ «Վիրաւոր Հայկ»-ի ՀՄՄի ղեկավարներէն, ինչպէս նաեւ Սփիւռք նախարարուհի Տիկ. Հրանուշ Յակոբեանէն (որուն պատճէնը կը հրատարակենք առանձինն):

Գործադրուեցաւ օրուան պատշաճ գեղարուեստական բարձրորակ յայտագիր մը, մասնակցութեամբ շնորհալի արուեստագէտներ երգիչ Ռազմիկ Մանսուրեանի («Թուչի մտքով տուն» եւ Հոր Հոր աղայի երգը «Կարինէ» օփերէթէն), երգիչ Յարութ Յակոբեանի կատարմամբ «Զեփիւռի Նման» ու «Քարավան» երգերը, նուագակցութեամբ Յարութիւն Զիրօլեանի: Իսկ հանրածանօթ ասմունքով եւ խօսնակ Նունէ Աւետիսեան իւրաքանչեւ մեկնաբանութեամբ արտասանեց Գէորգ Էմինի «Դու» եւ «Զգոյշ խօսիր Հայաստանում»-ը:

Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեան իր սրտի խօսքին մէջ բնութագրեց Տիգրան Սարաֆեանի ծառայութիւնն ու հայրենասիրութիւնը: Անդրադարձաւ նմանապէս Լիբանանի դժուարին տարիներուն «Երբ շատեր մեզ կը գունաւորէին՝ Տիգրան Սարաֆեանի նման մարդիկ մնացին պատնէշին վրայ: Ան բարձր գնահատեց Հնչակեան տղոց մօտ շեշտուած հայրենասիրութեան

ոգին, քանի որ հայրենիքն է յաւերժականը: Սփիւռքը պէտք ունի Տիգրան Սարաֆեաններու նման ղեկավարներու» ըստ ան:

Այս առթիւ Հ.Մ.Մ.ի ոսկեայ շքանշանով պարգևատրուեցաւ Տիգրան Սարաֆեանը, ձեռամբ մարզական դիւանի ատենապետ Վահէ Աջապահեանի: Իսկ Պէյլանի Հայրենակցական Միութեան ատենապետ Յարութիւն Ֆոտուլեանի ձեռամբ պարգևատրուեցաւ բիւրեղապակեայ շաքաքանդակով մը:

Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեան իր ելոյթին մէջ նշեց. «Հրճուանքի եւ երանութեան պահ է ինձի համար: Պիտի խոստովանիմ որ դժուար պիտի չըլլայ ինձի իր մասին արտայայտուիլ թէ որպէս գաւակ եւ թէ որպէս կեդրոնի ատենապետ...»:

Նշելով իր հօր Տիգրան Սարաֆեանի բարեմասնութիւններն ու նկարագրային առանձնայատկութիւնները ըսաւ. «Ան ինչպէս հասարակական կեանքի մէջ, նաեւ նոյնն էր տան մէջ: Իր ամենակարեւոր յատկանիշերը երկուք են՝ Հաւասարակշռուածութիւն եւ ներքին համախոհութիւն: Ծայրայեղ ըլլալը դիւրին է, այդ հարցին մէջ ինք համախոհութիւնն է որ կը ջատագոյնէ: Իսկ հարցերու լուծման համար բնատուր ձիրք մը ունի: Ուրիշներ իր մէջ կը փնտրեն ուղղակի պարկեշտ տիպար հայր: Եթէ դարձեալ ծնելու ըլլամ պիտի նախընտրեմ զինք ունենալ վերստին իբրեւ հայր»:

Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան իր փակման խօսքին մէջ ի մէջ այլոց ըսաւ. «... Դուք սիրելի յօբելեար 65 տարի եղած էք այն կանթեղը որ դարձած է անշէջ

Մեծարանքի Յիշարժան Երեկոյ



Շարունակուած էջ 6-էն

լոյս եւ քաջօրէն պատասխանած էք Տիրոջ կանչին:

Մենք ձեզ ճանչցած են բեմէն, մանաւանդ այստեղ վերջին 14 տարիներուն կամրջած էք վաղուան նոր կեանքը: Կը խոնարհինք ձեր վաստակին առջեւ, որովհետեւ մեր հայրերու տեսիլքով ապրեցաք:

Մենք կը շնորհաւորենք ձեզ ի սրտէ եւ հազար փառք կու տանք Աստուծոյ, որ ձեր ընտանիքը դարձուցած է տաճար բարութեան:

Այս առթիւ Սրբազանը մետաղեայ յուշաբանդակ մը նուիրեց: Արուեստի գործ մըն էր որ կը խորհրդանշէ թէ Քրիստոսի յարութիւնը եւ թէ մեր ժողովուրդի

յարութեան կոչը:

Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ մեծարեալը: Ան շահեկան կարգ մը դերուագներ պատմեց մարգական եւ հասարակական կեանքէն առնուած: Այնուհետեւ յարեց. «...ուր կայ հայկական ոգի՝ այնտեղ կայ յաջողութիւն»:

Աւարտին տեղի ունեցաւ պատուած հիւրասիրութիւն պատրաստուած Պէյլանի Հայրենակցական Միութեան Տիկնանց յանձնախումբին կողմէ, որու ընթացքին ներկաներն իրենց սրտաբուխ շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեցին սիրելի յոբելեարին:

«Պատիւս արժանաւորաց»:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԽՕՍՔ

Վաստակաւոր եւ նուիրեալ Ընկ. Տիգրան Սարաֆեանի այս մեծարանքի երեկոյին հնարաւոր չէ սրտի խօսք մը չլիջել:

Ես կ'ուզեմ Տիգրան Սարաֆեանի ազգային, քաղաքական վաստակը փառաբանել զինք անուանելով հմուտ քաղաքական գործիչ հեռատես հայեացքներով, ազգային համախոհութեան ջատագով, եւ նուիրեալ գաղափարի մարտիկ:

Այս բոլոր մակդիրներուն արժանացած է Ընկ. Տիգրան Սարաֆեան նամանական լիքանալով եւ իր քաղաքացիական պատերազմի ընթացքին, որու ամբողջ տեւողութեան մնաց պատնէշի վրայ, նոյնիսկ երբեմն առանձին: Նախ որպէս ««որական չէզոքութիւն» քաղաքականութեան կերտիչներէն եւ ապա գետնի վրայ գայն հետապնդող, եւ գործադրողներէն 15 տարիներու երկարող ժամանակի վրայ, որուն որպէս արդիւնք լիքանալով քաղաքացիական փրկուեցաւ շատ մեծ վտանգներէ եւ պատուհասներէ, եւ բազմաթիւ առեւանգուածներ ինչպէս նաեւ հայ թէ տեղացի կեանքեր, փրկուեցան շնորհիւ իր խոհեմ միջամտութիւններուն եւ իր բազմազան կապերուն:

Չի մոռնանք հայրենիքի հանդէպ անոր տածած անսահման սէրն ու կապուածութիւնը, յատկապէս խորհրդային տարի-ներուն:

Պէլլանցի գտարուն հայ որ ՅՍՄ-եան եւ ՅՆՀակեան հայրենասիրական կարճաժամ ստացած էր իր ազգին ծառայելու վկայականը, աւելի քան երեք քառորդ դար մնաց պատնէշի վրայ երբեմն որպէս յառաջատար, երբեմն ալ որպէս անյայտ զինուոր ի սպաս հայ ժողովուրդին հայոց սուրբ դատին եւ հայրենիքին:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆՂԱՍ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՍԵՊՈՒՅ ԳԱԼՓԱԲԵԱՆ Պէյրուք, 5 Ապրիլ 2017

ՍՓԻՌԻ ՆԱԽԱՐԱՐ ԶՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՈՋՁՈՅՆԻ ԽՕՍՔԸ

ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐ-ՉՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԻԲԱՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԽԱՉԻԿ ԲԷՇԻՇԵԱՆԻՆ

Յարգելի Պարոն Բէշիշեան, Ջերմօրէն եւ խորին ակնածանքով կը շնորհաւորենք ազգային-հասարակական գործիչ Տիգրան Սարաֆեանի ՅՍՄ-էն ներս իրականացուցած գործունէութեան 65-ամեակը: Առաւել քան վեց տասնամեակներու ետին ամփոփուած է բազմազան տարիներու Սարաֆեանի բովանդակային ու հարուստ կեանքը՝ լի ազգային եւ հայրենամուտ բեղուն գործերով ու անդադրում աշխատանքով: Բարձր կը գնահատենք մեծ աւանդ ունեցող հասարակական գործիչի դերակատարութիւնը, Սփիւռքի երկու մեծ համայնքներէն ներս մարգական կառոյցներ ձեւաւորելու նախաձեռնութիւնները, հետեւողականութիւնն ու նուիրումը իր կառոյցին, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք կապերու հաստատման եւ զարգացման գործին մէջ ունեցած աւանդը: Յիշարժան են դեռ խորհրդային Միութեան տարիներուն Հայ Մարմնամարզական Միութեան 50 եւ 60-ամեակներու Հայաստանի մէջ նշումը, որ սոսկ ձեռնարկ չէր, այլեւ Հայրենիքի հանդէպ սիրոյ եւ երախտիքի դրսեւորում: ՍԴՀԿ կառոյցի մէջ Տիգրան Սարաֆեանի պաշտօնավարման տարիները մշտապէս արդիւնաւորուած են հայանպաստ տարբեր ձեռնարկներու իրականացումով: Հայաստան-Սփիւռք կապերը սերտացնելու նպատակով ՅՍՄ-ի նախաձեռնութեամբ կազմակերպուեցաւ կառոյցի հովանիին տակ գործող ֆուլթայլի առաջին խումբի փոխ այցելութիւնները Լիբանան եւ Հայաստան:

«Թէքէյեան Կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վ. Ուզունեանի անունից Արցախցի տաղանդաշատ երիտասարդներին շնորհաւորեց ու նորանոր յաջողութիւններ մաղթեց ԹԿՀ տնօրէն Արմէն Ծուլիկեանը, հատկանշելով, որ ցուցահանդէսի խորագիրը Արցախի մեր հայրենակիցների կեանքի սկզբունքն է վկայակոչում, իսկ ներկայացուած ցուցանմուշներն արտացոլում են հեղինակների ազատութեան եւ անկախութեան գաղափարները: Պրն. Ծուլիկեանը նաեւ խորին շնորհակալութիւն յայտնեց բոլոր գործընկերներին, որոնց շնորհիւ ցուցահանդէսն իրականութիւն դար-

ձաւ: Ինչպէս «Շուշի քաղաքի թանգարաններ» ՊՈԱԿ-ի տնօրէն արուեստաբան Լուսինէ Գասպարեանը նշեց, ցուցահանդէսը իւրօրինակ խորհուրդ ունի, քանզի մասնակիցներն այն արուեստագէտներն են, ում անհոգ մանկութիւնն ու խաղը խափանուել են ու մթակոծութեամբ, ովքեր պատերազմ են ապրել եւ հիմա իւրովի են նայում կեանքին: Սակայն չեն ընկճուել, հակառակը՝ կեանքն աւելի պայծառ գոյներով են տեսնում. նրանց ստեղծագործութիւնները լցուած են լոյսով, յոյսով ու հաւատով:

Երեւան քաղաքի պատմութեան թանգարանի տնօրէն Արմինէ Սարգսեանը յայտարարեց ցուցահանդէսը բացուած, իր հերթին ընդգծելով, որ ցուցահանդէսին ներկայացուած աշխատանքներն իրենց վառ գոյներով կրում են հայ ժողովուրդի յաւերժութեան խորհուրդը:

Ցուցահանդէսի բացմանը ներկա էին նաեւ Երեւանի քաղաքապետ-



տի տեղակալ Արամ Սուքիասեանը, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի եւ տուրիզմի վարչութեան պետ Ռուբէն Յովհաննիսեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների եւ արխիւների տնօրէն Տէր Ասողիկ քահանայ կարապետեանը, արուեստագէտներ եւ արուեստասէրներ: «Ազատութիւնն այլընտրանք չունի. անկախութիւն» ցուցահանդէսը Երեւան քաղաքի պատ-

մութեան թանգարանում կը գործի մինչեւ ս.թ. Ապրիլի 17-ը: Նշենք, նաեւ որ այս հաւաքածուի առաջին ցուցադրութիւնը կայացել է 2016թ. Դեկտեմբերին Թէքէյեան Կենտրոնում, երկրորդը՝ ս.թ. Փետրուար-Մարտին Ազգային ժողովի ցուցասրահում, իսկ ս.թ. Ապրիլի 21-ից այն կը ցուցադրուի նաեւ Վրաստանում՝ Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կեդրոնում:

Մեծ Եղեռնի 100+2-րդ տարեդարձի առթիւ
In commemoration of the
Armenian Genocide's 100+2 Anniversary
Organized by
Gaidz Youth Organization
&
Armenian Council of America's
San Gabriel Chapter



ՀՄԿՈՒՄ

COMMEMORATING
THE ARMENIAN GENOCIDE

“HOPE FOR THE FUTURE”

Sunday April 23, 2017
Կիրակի Ապրիլ 23, 2017
MEMORIAL PARK

PASADENA
85 Holly Street, Pasadena, CA 91101
Starting at 7:00 pm

Ձեր Ծանուցումները
Վստահեցեք
«Մասիս»
Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
massis2@earthlink.net

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՎԱՆԵՆ



Դիւանիս 31 Մայիս 2016 թուակիր հաղորդագրութեամբ տեղեակ պահելու էինք պատուական հասարակութիւնը, որ վերջին տասնամեակներու ընթացքին Միիթարեան միաբանութեան դիմագրաւած տնտեսական եւ այլ կարգ մը հարցերուն առնչութեամբ, իբրեւ նեցուկ եւ օժանդակ նման հարցերու լուծման համար՝ Հոռնի Ս. Աթոռին կողմէ կարգուած էին հերթաբար, 1977-էն սկսեալ, մասնաւոր խորհրդականներ եւ գործակատարներ, «այցելու» տիրոջով եւ տարբեր իրաւասութիւններով օժտուած: Այս անձերը, ծանօթ՝ իրենց վարչական, գիտական, հոգեւոր կամ մշակութային գործունէութեամբ, չաճախ նաեւ միջազգային գետնի վրայ, ոչ հայ կրօնաւորներ էին, եկեղեցական տարբեր աստիճաններով:

Դժբախտաբար, այդ հերթական «այցելութիւն»-ներէն չէին քաղուած ակնկալուած վերջնական արդիւնքները: Ի տես այս իրադրութեան, 30 Ապրիլ 2016 թուակիր վճռագրով, Ն.Ս. Փրանկիսկոս պապը Միիթարեան միաբանութեան համար Պապական պատուիրակ կը նշանակէր, լիազօր իրաւասութիւններով, Պոլսոյ Հայ կաթողիկէ թեմի առաջնորդ գերպ. տ. Լեւոն արք. Զէքիեանը: Պատուիրակի իրաւասութիւնները լրիւ ի գորու կը դառնային, ստորագրութեան իրաւունքով՝ նաեւ քաղաքական ատեաններու առջեւ, 1 Յունիս 2016 թուականէն սկսեալ:

Հիմնական հարցերը, որոնք կը ծառանային Միաբանութեան առջեւ, զարգացող սրածութեամբ, անցեալ տասնամեակներու ընթացքին, կարելի է վերածել խորքին մէջ հետեւեալ երեք կէտերուն՝

Ա) Կրօնաւորական եւ քահանայական կոչումներու նուազումը, որ երաշխիքը կը կազմէ գոյատեւման:

Բ) Տնտեսական հարցը, բնորոշուած յատկապէս բարձր պարտքերով:

Գ) Միաբանական մէկէ աւելի անշարժ գոյքերու անպտղաբեր եւ տակաւ վատթարացող վիճակը, արդիւնք նաեւ նիւթական հնարաւորութիւններու եւ անձնակազմի պակասի:

Հարկ է ընդունիլ, որ առաջին կէտը համընդհանուր երեւոյթ է՝ յատկապէս արեւմտեան երկիրներու համակարգերուն մէջ, որ ուժգնորէն ազդած է նաեւ Միջին Արեւելքի վրայ, աւանդաբար գլխաւոր ծաղկանոցը Միիթարեաններու եւ ողբերգականօրէն թիրախը՝ շուրջ կէս դարէ ի վեր քաղաքացիական աւերիչ պատերազմներու: Այս ուղղութեամբ կը մշակուին արդէն

ծրագրեր՝ թէ՛ ի տես կոչումներու հնարաւոր բազմացման եւ թէ՛ յատկապէս կանոնական եւ իրաւական միջոցներու գոյացման, պահպանելու համար յստակօրէն լրիւ եւ վճարականօրէն Միաբանութեան հայցի եւ միիթարեան ինքնութիւնը, նաեւ որեւէ անակնկալ հաւանականութեան պարագային:

Ինչ կը վերաբերի երկրորդ կէտին, անցնող տասը ամիսներու ընթացքին տեղի ունեցած է պարտքերու նուազում մը, թէ՛ որոշ նուիրատուութիւններու շնորհիւ եւ թէ՛ վաճառումովը երկար ժամանակէ ի վեր լքուած ու ներկայ միջոցներով շահագործումը անկարելի դարձած ինչ-ինչ դատարկ տարածքներու:

Տ. Լեւոն արք. ի նշանակումէն քիչ ժամանակ առաջ բաւական շփոթ ստեղծեր էր Լիբանանի Հազմիթի թաղամասին մէջ գտնուող Միիթարեան կալուածին վաճառման ծրագիրը, ուր կը գործէ նաեւ համեստ դպրոց մը: Տ. Լեւոն արք. Զէքիեան, հազիւ նշանակուած, միաբանակիցներուն պաշտօնապէս յաշտարարեց, որ բացարձակապէս չեն վաճառուիր՝

ա) հաստատակարգային գոյքերը (օր. Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան եւ Սելրի Սամուէլ Մուրատեան վարժարանները, անշուշտ բոլորովին աւելորդ իսկ է նոյն հաստատումը ընել Ս. Ղազարու մայրավանքին եւ Վիեննայի մենաստանին նկատմամբ, քանի որ ասոնց բացարձակ անձեռնմխելիութիւնը գրաւականը եւ խորհրդանիշն է միանգամայն Միաբանութեան գոյատեւման),

բ) Հազմիթն:

Ներկայ հաղորդագրութեան նպատակն է որոշ տեղեկութիւններ հաղորդել հանրութեան՝ ներկայիս մշակուած ծրագրերու մասին, փարատելու համար նաեւ կարգ մը պատահական թիրիմացութիւններ:

Ա) Մուրատ-Ռափայէլեան եւ Սելրի Սամուէլ Մուրատեան վարժարաններ

Երկու մեծագին կալուածներ, որոնք աւելի քան մէկ ու կէս դար ծառայած են իբրեւ ամենաբարձր մակարդակի կրթարաններ, լոյս եւ սնունդ ջամբելով հայ ընտանի մանկտիին □ եւ յատկապէս առաջինը □ ամենէն բախտորոշ դերը կատարած են Հայ Զարթօնքի շարժումին ծրարական եւ ծաւալման մէջ հանուր հայ գաղթօճախներու եւ մայր Երկրի տարածքին: Այդ կալուածները բաւական ժամանակէ ի վեր կը գտնուին համեմատաբար անբարօր պայմաններու մէջ, մերթ ենթակայ նաեւ վթարային վտանգներու:

Այս կալուածներուն ժամ առաջ, պատմական շէնքերու վերանորոգման միջազգային չափանիշերու համաձայն, գործածութեան վերատացման եւ հայ ժողովուրդի ծոցին մէջ իրենց պատմական մշակութային վիթխարի դերին վերարժարման պահանջը այսօր անյետաձգելի անհրաժեշտութիւն է:

Ներկայիս Միաբանութիւնը կը գտնուի բանակցութիւններու մէջ տնտեսապէս կարող եւ ծանօթ կազմակերպութիւններու հետ, սա հիմնական բնաբանով՝ որ այդ կալուածներուն մէկ մասը վերանորոգուի, ըստ պատշաճի, որպէս հասութեամբ գոյք, ու եկած հասոցիին մէկ մասով, որ վճարուի Միաբան

մշակութային ժառանգութիւնը - ձեռագրեր, նկարներ, հնատիպ գրքեր, հնադրոշմ կահոյք եւ առարկաներ, եւ այլն - որ նաեւ կը կազմեն հայ ժողովուրդի հարստութիւնը:

Ներկայիս կ'ուզենք յայտարարել միանգամայն, որ առաջարկներ, ինչպէս վերել յիշուածները, գորս կրնան ներկայացնել հայ կամ այլ ընկերութիւններ եւ անհատներ, նկատի պիտի առնուին ամենայն լրջութեամբ - կը կրկնենք ըստ վերանորոգման միջազգային լաւագոյն չափանիշերու եւ վարձակալութեան օրինական պայմաններու, համաձայն՝ միաբանական ծրագրին, պահելու եւ զարգացնելու համար կալուածներուն տարա-



նութեան՝ իբրեւ տարեկան վարձակալութիւն, ծաւալին մշակութային, գիտական, կրթական համակարգուած նախաձեռնութիւններ կալուածի այն մասին մէջ, որ ըստ պայմանագրութեան, յատկացուած պիտի ըլլայ լոկ միաբանական գործածութեան, ի տես սոյն նախաձեռնութիւններու մշակման:

Ծանօթ է, որ մեր Նախնիք, գրեթէ միշտ, իրենց կառուցած եկեղեցիները եւ ուսումնարանները օժտած են հասութեամբ կալուածներով, որպէսզի ի վիճակի ըլլային ծաւալել իրենց կրօնական եւ մշակութային գործունէութիւնը: Նոյնինքն Մուրատ-Ռափայէլեան վարժարանը ունեցած է հասութեամբ բազմաթիւ կալուածներ Փատովա քաղաքի եւ Վենետիկ նահանգի այլ վայրերուն մէջ, որով՝ դար մը եւ աւելի հնարաւորութիւն ընձեռած են նոյնիսկ անվճար դաստիարակելու անհամար հայ սերունդներ: Այդ կալուածները դժբախտաբար վաճառուած են ի. դարու եօթանասնական թուականներէն սկսեալ, թողլով հաստատութիւնը առանց մնայուն եկամտուի:

Նախատեսուած ծախսը բարուք վերանորոգման համար, կը հասնի բարձր գումարներու: Իսկ տարեկան վարձակալութեան իբրեւ նուազագոյն սահման կը նախատեսուի գումար մը, որ արտօնէ Միաբանութեան, այս եւ նման կալուածներու հասոցիներով, ո՛չ միայն ծաւալել հայ ժողովուրդի ժամանակակից կարիքներուն համապատասխան գործունէութիւններ, այլ նաեւ կարենայ ըստ արժանուր պահպանել այն վիթխարի

մերժօրէն մշակուած յատկացուած անձեռնմխելի բաժինները:

Նկատի առած իրադրութեան հարկադրիչ հանգամանքները եւ գործնական քայլերու համար անհրաժեշտ ստուգումներու, արտօնութիւններու եւ տնօրինումներու երկար գործընթացը, առաջարկներու իբրեւ պայմանաժամ կը հաստատուի 30 Յունիս 2017 թուականը: Կը խնդրուի բոլորէն, որ հարցին մօտենան գործնականօրէն, առանց մնայուլ կաղապարուած, հետորական բանաձեւերու մէջ կամ կրկնելով բազմատասնամեայ յանկերգներ, որոնք կը մնան անխուսափելիօրէն ամլութեան սահմաններուն մէջ, ինչպէս կը տեսնուի նաեւ մերձաւոր պատմութեան եւ առօրեային:

Բ) Հազմիթ

Հազմիթի կալուածը կը վայելէ արդէն Միջին Արեւելքի չափանշով ծանօթ հայ գործակալութեան մը արհեստավարժ հոգատարութիւնը: Նպատակն է այնտեղ գործող դպրոցը փոխադրել Ռաուտա, յետ այստեղի կալուածին վերանորոգման, իսկ պահել Հազմիթն որպէս նորաշէն հասութեամբ կալուած՝ ի նպաստ գլխաւորաբար Միաբանութեան Միջին Արեւելքի մէջ գործունէութեան:

Այս հաղորդագրութիւնը կը հրապարակուի ի գիտութիւն եւ ի լուսաբանութիւն մեր ժողովուրդին եւ բոլոր բարեացակամ, հայ մշակուածի եւ Միիթարեան միաբանութեան բարիքով հետաքրքրուած անձերուն եւ խումբերուն:

Դիւան Միիթարեան
Միաբանութեան
Վենետիկ, Ս. Ղազար մայրավանք

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ԱՏՈՅՉ ՓՈՐՁԱՆՔԻՑ ՓՐԿՈՒԱԾ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մեզ ծանօթ ընտանիքն անարդիւնք ասեկոսից յետոյ յուզուած մատնուել էր լուռութեան, սակայն երկար չտեւեց այդ, ընտանիքի հայրը նկատելով վիճակը խելամտօրէն որոշեց գուրգուրալից դիմել Արշակին, որը աշխատանքի համար գնում էր մի հեռու քաղաք՝ Իրանի հարաւային ծայրամասում:

-Այ բալամ, ինչո՞ւ ես գնում այդ հեռու քաղաքը, էն էլ մեր աչքից հեռու, ի՞նչն է ըստեղ, ինչդ է պակաս, մեր մօտ ես, մեր շնչի տակ: Մեր կեանքի ուրախութիւնը, մեզ հասնողն ու տան հացբերը դու ես, ամենիս աչքերը քո ձեռքերին է նայում, քոյր ու աղբէրներդ, ես ու մէրդ էլ ճօ գործող չենք, ինչ կլինի մեր վիճակը առանց քեզ, արի ու սատանի էջից ցած արի, հէնց էստեղի գործը շարունակի, կամաց-կամաց ուժիկդ էլ կը շատանայ, աղբէրներդ էլ գործի կ'անցնեն եւ կը յաղթահարենք դժուարութիւնները, առայժմ մենք շատ էլ գոհ եւ ուրախ ենք քո բերած փողով, լաւ կլինի, որ հրաժարուես գնալուց:

Այս խօսքերը մտահոգութեան արդիւնք էին, նկատի ունենալով անփորձ մի երիտասարդի մենակ մեկնումը անծանօթ մի քաղաք աշխատանքի համար:

Նրանց ընտանիքը բաղկացած էր ութ հոգուց՝ ծնողներ, չորս եղբայր եւ երկու քոյր, Արշակն ամենամեծն էր տասնինը տարեկան, միջակ հասակով համակրելի հայեացքով, տան աշխատակորն Արշակն էր եւ իրենից փոքր եղբայրը, միւս քոյրերն ու եղբայրները փոքր տարիքի էին, իսկ հայրը ոչ մի գործի ունակ: Նրանք գիւղի կեանքով ծնուած ու ապրած, ոչ երկար ժամանակ էր գիւղից Թեհրան էին տեղափոխուել, դա 1949 թուականին էր, նրանք նիւթապէս ոչ ապահով վիճակ ունէին, ներգաղթի պատճառով թողած էին գիւղի աշխատանքը, Արշակին էին մնացել տան հոգեբեր:

Նա պատանի տարիքում մենակը գիւղից Թեհրան էր եկել, աշակերտելով վարպետ Մինասին՝ Թեհրանի առաջնակարգ լուսանկարիչներէից մէկի մօտ, նա իր ուշիմութեան եւ սրաթափանցութեան շնորհիւ հմտացել էր լուսանկարչական գործում, վարպետօրէն ռետուշ էր անում եւ այլ նկարահանման գործեր կատարում: Արշակն առանց բարկանալու, այլ տրամաբանօրէն հօրը համոզելու խօսքեր ասաց.

-Հէր ջան, ընկերիս ծանօթներդ մէկը Խոռամշահրում, խանութ ունի, բարձր ուժիկով ինձ աջակց վարձագրելու է: Մենք կարիք ունենք շատ դրամի, որ յարմար լին տեղում ապրենք, քոյրերիս եւ աղբէրներուս էլ դպրոց դրկեմ, որ իմ նման անուս չմնան, ես պատրաստ եմ նեղութեան մէջ լինել, միայն թէ դուք դժուարութեան մէջ չլինէք: Երկու օրից ծանօթիս հետ գնալու եմ, չեմ թողնի առանց ծախսի մնաք, առայժմ ընդունիր այս գումարը, յետոյ էլ ամէն ամիս դրամ կ'ուղարկեմ, էնպէս չլինի որ խեղճ ապրէք: Յոյս ունեմ այնտեղ լաւ կլինի, նոր մարդկանց հետ կը ծանօթանամ, շփուելով փորձառութիւն ձեռք կը բերեմ, մտքով եւ գործով կը քարգանամ, աշխարհը միայն այստեղ չի որ ապրում ենք, աշխարհը շատ մեծ է տարբեր ազգի ժողովուրդ-

ներով, սովորութիւններով եւ քաղաքներով:

Երեխայի հնազանդութիւնը ծնողից, մեծ ու պզտիկի յարգանքն ու պատիւը մեր հայկական ընտանիքներում աւանդապէս կարեւորում է, եթէ օտար մշակութիւնի ազդեցութեան տակ չփոխակերպուենք, իսկ հարց է առաջանում, ինչո՞ւ պիտի լինենք, չէ որ հայերս որպէս հնադարեան ժողովուրդ եւ մշակութիւն հարուստ պիտի ուրախ եւ գոհ լինենք ամուր պահելով մեր հայկական փառասիրութիւնը ու օջախի սրբութիւնները:

Արշակի խօսքերն որոշ չափով տնեցիներին համոզեցին իրենցից հեռացնեն նեղմտածողութիւնը եւ կասկածամտութիւնը, քանի որ Արշակի յանձնառութիւնը տնեցի-ներին բարեկեցիկ կեանքի մասին մտածելն էր, այդուհանդերձ նրանք յոյս կապեցին Արշակին, անորոշութիւնից դէպի բարի ցանկութիւնների իրականացման ճամբին: Նրանք գրեթէ մտքով խաղաղուած իրենց վարձու մէկ սենեակում յատակի գորգի վրայ կողք-կողքի շարան պառկեցին քնելու: Արշակի անկողինը սենեակի միակ պատուհանին կից էր փռուած:

Գարնանային եղանակ էր, անամպ երկինք, աստղերը շէկ մանր լապտերների էին նման էն տիեզերքի անհունութեան մէջ, որոնք ցոլարձակում էին սկաւառակաչափ լուսնակի լոյսին գորակցելով: Արշակը աչքերը բաց հետեւում էր գիշերային աստղավառ երկնակա-մարին, կարծես իր բախտի աստղն էր փնտրում, բաւարարուած էր, որ տնեցիները համոզ գտնուեցին իր մեկնումի հետ: Նա գարթուն ապագայի ծրագրեր էր մտածում, մէկէն իր ընկերուհի Սիրանին լիչեց, կարօտի ջերմ գգացում իրեն պատեց, որոշեց անպայման նրան հանդիպել նախքան մեկնումը, ահա այսպիսի մտքերով տոգորուած ընկղմուեց քնի մէջ:

Առաւօտեան Արշակը գաղտնի տեսակցեց Սիրանի հետ, երկու երիտասարդ-սիրահարների ջերմ ու կարօտագին հանդիպում, գիւղական վարք ու բարքով մեծացած ու դաստիարակուած, նրանք ամօթխածաբար ձեռնուեցին եւ գրկախառնուեցին առանց համբույրների: Այստեղ Ամբերկայում երբեմն տգեղ վարքերի ենք ակնատես լինում, որ ամօթից չտեսնելու տալով արագ հեռանում ենք: Նրան տեղեկացրեց, որ գնալու է Խոռամշահր աշխատելու:

-Արշակ, ե՞րբ ես գնում. Սիրանը մտահոգ դիմեց նրան.

-Վաղը առաւօտեան շուտ ճանապարհուելու եմ:

-Ախր ինչո՞ւ ես էթում, միթէ՞ ինչ է ըստեղի գործը:

-Սիրան ջան, Խոռամշահր գնալով շատ աւելի պիտի ինձ վճարեն, իմ նման վարպետ լուսանկարչի կարիք կայ, յետոյ այն որ լաւ ապրելու համար դրամ պէտք է ունենալ, որը այնտեղ աշխատելով կը ստացուի, դե՛հ, բեռնաւորուած եմ ծախսերով, իմ եւ քո ապագայ գալիք օրերի մասին էլ պիտի մտածեմ: Արշակի արտաբերած վերջին նախադասութիւնը ներքնապէս Սիրանին ուրախացրեց, որը տեսնելի դարձաւ քաղցր ժպիտով դէմքի վրայ, նա պատասխանելով Արշակին համաձայնութիւն յայտնեց.

-Արշակ, գնա՛ Աստուած քո հետ, միայն մտքումդ պահիր, որ քեզ սպասող կայ, յոյսեր են կապել քո վրայ, գգոյջ քո գործին ու արարքին: Արշակն ուղեկցեց Սիրանին եւ նախքան տան շեմին հասնելու թաքուն

պատի ետեւը անտես գրկախառնուեցին, ապա բաժանուեցին խոստումներով: Նրանց սիրային հանդիպումներից ծնողները մնում էին անտեղեակ:

Այգն իր լուսէ թեւերն յաղթականօրէն արդէն տարածել էր մութ-խաւարին յետ մղելով դէպի մոլորակի արեւմտեան կողմերը, դեռ ժամանակ կար արեւի ծագման ու շողարձակման, տնեցիները բոլոր արթնացել էին Արշակին ճանապարհ դնելու, նա երկար ճանապարհ պիտի գնար հազար կմ-ից աւելի հեռու քաղաք՝ ծովափնեայ նաֆթաարդիւնաբերութեան քաղաքներից մէկը: Նրանք շրջապատել էին Արշակին, չորդորում էին, գգուշացնում էին փորձանքներից, ճանապարհի համար սնունդ դնում ճամպրուկի մէջ, այդ պատրաստութեան մէջ էին, երբ դրսից մեքենայի շահլուս լսուեց, Արշակն անմիջապէս կուսեց որ պարսիկ Սադեղ ընկերոջ ազգանշանն է, ամէն ինչ դասաւորուած եւ աւարտուած էր պատրաստ տնից դուրս գալու համար, համբույրներով ողողուեց Արշակի դէմքը, նրա մայր Եղիսաբեթը ամանը ջրով լիքը տնեցիների հետ դուրս եկաւ, մեքենան աշխատեցուեց, բարի ճանապարհի ձեռքեր օրօրուեցին, մայր Եղիսաբեթը ամանը ձեռքին անցաւ մեքենայի ետեւը, նա աման ջուրը թափով նետեց մեքենայի ետեւից որպէս անփորձանք ճանապարհ եւ բարի վերադարձ, հին սնոտիապաշտութիւն: Հայր Մատթէոսը աղօթքներով առ Աստուած Արշակին բարի ճանապարհ մաղթեց:

Նրանք հանրակառքով գնացին, գնացքով չէին կարող գնալ, երկաթգիծը աւրուել էր Ղոմ քաղաքում նաֆթահորի ժայթքման հետեւանքով ահաւոր հրդեհ առաջացնելով, Ղոմից կարելի էր գնացքով գնալ:

Հասնելով Ղոմ դիմեցին երկաթուղային գրասենեակ, տոմսակ գնեցին երեք օր յետոյ Խոռամշահր մեկնելու համար: Քաղաքի կենտրոնում հիւրանոցում սենեակ ապահովեցին: Երեք օրեր շարունակ նրանք տեսանելի վայրեր այցելեցին: Ղոմը կրօնական քաղաք է հարուստ շքեղագարդ մզկիթներով, կրօնական բարձրագոյն դպրոցներով, կրօնականներով, դամբարաններով եւ թանգարաններով, նաեւ հրուշակապատրաստման կենտրոն քաղաք է: Մի որոշ իսլամական վայրեր այն օրերին մուտքը արգելուած էր քրիստոնէաների համար, հաւանաբար տարիների թաւալումով մտայնութիւնները փոխուած լինեն էկոնոմիկ իսլամ-քրիստոնէայ շահեկան երկխոսութիւնների արդիւնքում:

Արշակը խօսելով Սադեղ ընկերոջ մասին ասաց.

-Վերջին օրը նա հրաժարուեց Խոռամշահր գալուց, ասելով թէ.- Թեհրանից կանչել են կարեւոր գործի համար: -Ես մենակս ճամբորդեցի նրանից ծանօթ նկարչի հասցէն առնելով: Գնացքը առաւօտը շուտ ճանապարհ ընկաւ տասնեակ կառքերով միացած: Ես տեղաւորուել էի մի խուցում, որտեղ վեց հոգի էինք: Իմ դիմացի երեք հոգիները հայր եւ որդիներ էին՝ տարեց հայր եւ երկու լիքը կազմուածքով երիտասարդներ, իսկ կողքիս երկուքը ամուսիններ էին, ամուսինը երկաթուղային պաշտօնեայ: Հայր ու որդիները

անունով պատրաստուած էին եկել՝ ուստելիքներ, մի ընկերութիւն եւ պատրաստի թէյ ու սառը ջուր ֆլաքաներում: Գնացքը ճամբորդներով եւ բեռներով առաջ շարժուեց քարափին թողնելով բազմաթիւ դիմաւորողներ: Մտքերի մէջ էի ընկել, գործիս մասին էի մտածում, ինքս ինձ հարց էի տալիս՝ Այս երեքը չեղած քաղաքում արդեօ՞ք յաջողութիւն կ' ունենամ, ինձ կ' արդարացնե՞մ մերոնց սպասելիքների դիմաց: Բաւական երկար ժամանակ էր անցել, երբ դիմացի աթոռից տարեց մարդը ինձ հրաւիրեց սնունդից օգտուել:

-Այս ուստելիքները մենակ մեզ համար չի, նաեւ ձեզ համար էլ է, պարտադիր բոլորդ էլ պիտի օգտուէք, խնդրեմ, հրամայե՛ք:

-Նկատելով որ չի կարելի մերժել գրադուեցի ուստելով՝ գործածելով իրենց պնակները, բաժակները եւ դանակ-պատառաքաղները: Ուստելը վերջ գտաւ, տարեց մարդը ինձանով հետաքրքուեց.

-Երիտասարդ, ասա՛, տեսնե՞մ, գործը ի՞նչ է եւ որտեղ ես գնում:

-Լուսանկարիչ եմ, Խոռամշահր եմ գնում ծանօթիս մօտ աշխատելու:

-Ես բեհբեհանցի եմ, Բեհբեհանը մեծ քաղաք է Ահուլադից յետոյ ճանապարհին, մենք լաւ լուսանկարիչի կարիք ունենք, արի՛, գնա՛նք մեր քաղաքը, խանութ կը դնեմ տրամադրութեանդ տակ աշխատես:

-Թող նախ գնամ Խոռամշահր, տեսնեմ ինչ է լինելու, եթէ կարիք գգացուեց, կը գամ ձեր մօտ, տուէք ինձ ձեր հասցէն:

-Մեր գրուցները շարունակուեցին տարբեր հարցերի շուրջ թէ՛ կողքիս ամուսիններով եւ թէ՛ նրանց հետ: Մի հարց ու պատասխանի ընթացքում ես շատ միամիտ գտնուեցի առանց խորանալով տարեց մարդու հոգեբանութեան մէջ, թէ ինչ մտածելակերպ ունի օտար կրօնների մասին, ասացի՝ -հայ-քրիստոնէայ եմ, այս խօսքս փոթորիկ բարձրացրեց, վայն եկաւ ու ինձ տարաւ, յանկարծակի երկրաշարժի պէս ցնցում պատահեց խուցի մէջ, հայր ու որդիները թափեցին իմ վրայ եւ սկսեցին բռնուցքներով հարուածել լպիքը հայհոյանքներ տեղացնելով, թէ.

-Պիղծ հայ, դու բոլոր մեր աման-չամաններն ու մեր կեանքը պղծեցիր, քաֆեր անիծուած հայ...

-Հարուածները գնալով սաստկանում էին երեք հոգի մէկ հոգու հանդէպ, դարձել էի արիւնլուայ, կողքիս պաշտօնեան միջամտեց դրսից մարդիկ կանչելով, որոնք յաջողեցին ինձ խլել նրանց ձեռքից: Մարդիկ տեղեկանալով միջադէպի մասին դատապարտեցին նրանց արարքը: Ինձ տարան մի այլ խուց, պառկեցրին, վէրքերս վերակապով կապկպեցին, սրսկումներ կատարեցին եւ թողեցին հանգիստ քնեմ:

Ճիշտ են ասել՝ մարդու բարեկամն ու թշնամին լեզուն է, անփորձ Արշակը անփորձութեան ծեծ կերաւ սպանուելու աստիճան, անշուշտ նրանց արարքը խիստ դատապարտելի եւ բանդարկութեան արժանի էր:

»Պիղծ հայ« ասուածը միտումնաւոր տարածուել է 1603-1625 թուականներին պարսից սեֆեւեան դինաստիայի Շահ Աբասի օրօք: Նա հայերին բռնագաղթեցնելով Հայաստանից բնակեցնել

**ԽՕՍՔԸ ԿՍՐՏԱՅԱՅՏԵ ԶԵՐ
ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ**

Մենք քիչ ուշադրութիւն կը դարձնենք, թէ ինչ ձայներն ազդել կը խօսինք, ինչ բառեր կ'արտասանենք: Օգտագործելով վերաւորական ու պարզապէս շատ «աղտոտ» բառեր՝ մենք կարծես մոռցած ենք, թէ ինչ բան է բարեկիրթ ու գեղեցիկ խօսքը: Բայց ատիկա միայն մեր անգրագիտութեան ու գիտակցութեան յետընթացի վկայութիւնը չէ: Միթէ՞ պարզ չէ, որ երբ մենք կոպիտ ու կեղտոտ բառեր կ'ըսենք, մեր հոգիին մէջ հանգիստն ու երջանկութիւնը չեն աւելնար: Լրիւ հակառակը: Մենք նսարաւորութիւն կու տանք, որ մեր հոգիին մէջ բացասական ու յարմարանք, իսկ յետոյ կը դարմանանք, թէ ինչու այդքան յաճախ ստիպուած կ'ըլլանք գլխացաւի դեղեր խմել:

Մինչդեռ գիտակցութեան ու խօսքի միջեւ կայ ուղիղ կապ: Եթէ գիտակցութիւնը առողջ է, խօսքն ալ արժանի կ'ըլլայ: Առողջ գիտակցութիւնը միշտ դրական է: Ունենալով նման գիտակցութիւն՝ մենք չենք խօսիր միւսներու թերութիւններուն մասին, չենք քննադատեր, պահանջներ չենք ներկայացներ: Ճակատագրորին մասին չենք բողոքեր: Մեր խօսքը հանգիստ ու բարեացակամ կ'ըլլայ: Նման գրողացակցի հետ բնականաբար բոլորը հաճոյքով կը շփուին: Իսկ բարկացած խօսքը հոգիին թուլութեան նշան է:

Ըստ վիճակագրութեան՝ բոլոր վէճերու 90 տոկոսին պատճառը այն է, որ մենք ոեւէ մէկուն մասին վատ բաներ կը խօսինք: Մենք պէտք է սորվինք խօսիլ հաճելի, բարեկիրթ ձեւով՝ վերահսկելով մեր խօսքը: Նկատուած են, որ մենք ձեռք

կը բերենք այն մարդու յատկանիշները, որուն մասին կը մտածենք կամ կը խօսինք, ատոր համար ալ եթէ ոեւէ մէկուն մասին վատ կը խօսինք, մենք այդ մարդու բացասական յատկանիշները մեզի ալ կը վերագրենք:

Եթէ կը գովենք՝ մենք կը ստանանք տուեալ մարդուն բնորոշ դրական յատկանիշները: Նկատենք, որ որքան եսասէր, նախանձող ու անբարեացակամ ենք մենք, այդքան մեզի համար դժուար է ոեւէ մէկուն մասին ջերմ խօսիլը: Որքան կոպիտ է մեր խօսքը, այդքան աւելի աններդաշնակ ենք մենք, ատոր համար ալ կեանքէն աւելի դժտան դասեր կը ստանանք: Մեր շատ յոգնելու ու քիչ գործ կատարելու պատճառներէն մէկը շատ խօսիլն է: Շատախօսութիւնը դատարկախօսութեան նշան է: Պէտք է խօսիլ քիչ, հանգիստ, համբերատար ու բարեկիրթ: Այդպէս կարելի է ե՛ւ ժամանակ տնտեսել, ե՛ւ ուժեր:

Կարեւոր է սորվիլ վերահսկել խօսքը: Խօսքերը պէտք է իմաստ ունենան, ուժեղ են միայն նման խօսքերը:

Բառերը իմաստ ունին, եթէ անոնք նրբանկատ են ու միւսներու հանդէպ լեցուած են սիրով: Ամէն ինչի մասին պէտք է ճիշդը ըսել, բայց՝ սիրով: Ինչ բառերով ալ, որ մայրը ստիպէ գաւակնորուն ընել այս կամ այն բանը, անոր խօսքերը կոպիտ չեն թուիր, քանի որ անոնք մէջ կը զգացուի մայրական սէրը՝ մայրը կը սիրէ մեզ, ան միայն բարիք կ'ուզէ մեզի համար: Եւ ճիշդ այդպէս ալ՝ որքան որ մենք դիպուկ ու կտրուկ չարտայայտուինք, մարդիկ չեն նեղանար մեզմէ, եթէ մենք վթարաւ ըլլանք:

ԸՆԴՈՒՆԵՑԷ ՍԵՓԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Երբ կը խօսինք մարդու անձնական աճի, ինքնագարգացման եւ յաջողութեան հասնելու մասին, մենք կը փորձենք առաջին հերթին շեշտը դնել ոչ թէ մարդու գիտելիքներուն, այլ անոր սովորութիւններուն եւ բնաւորութեան վրայ: Մարդու սովորութիւնները կը ձեւաւորեն անոր բնաւորութիւնը, իսկ մարդու բնաւորութեան կախեալ է անոր յետագայ ամբողջ կեանքը: Եթէ կ'ուզէք ձեր կեանքին մէջ որեւէ բան փոխել, ուրեմն առաջին հերթին փոխեցէ՛ք ձեր բնաւորութիւնն ու սովորութիւնները:

Մենք բոլորս ալ ժամանակ առ ժամանակ կը սխալինք: Ոչ ոք կատարեալ է եւ ուզէնք, թէ չուզենք, որեւէ պահ մենք կրնանք սխալիլ՝ որեւէ բան այնպէս չենք ընել կամ ըսել եւ որոշ ժամանակ անց անոր համար կը գղջանք: Իսկ թէ այնուհետեւ ինչպէս կը պահենք մենք մեզ, կը տեսնենք հիմա:

Ընդհանրապէս, շատերու մօտ կարծիք կայ, որ իմաստուն մարդը պէտք է երբեք չսխալի կամ սխալելու պարագային՝ պէտք է իր սխալները երբեք ցոյց չտայ: Բայց իրականութեան մէջ սխալները թաքցնելու, անոնցմէ խուսափելու եւ ընդունիլ չկարենալու մէջ չէ մարդու իմաստուն-

թիւնը, այլ հակառակը՝ սեփական սխալները ընդունելու եւ անհրաժեշտ պարագային ներողութիւն խնդրելու:

Պէտք է գալ հոգեկան եւ մտաւոր այնպիսի վիճակի, որ առանց լրացուցիչ ջանքերու ի վիճակի ըլլանք գիտակցիլ սեփական սխալները: Ընդհանրապէս, մարդը ունի ինքնապաշտպանական բնազդ եւ այն բացասական, որ առնչուած է իրեն, ան կ'ընդունի շատ դժուար:

Պէտք է կարենալ յաղթահարել զայն: Եթէ որեւէ սխալ կ'ընէք, առանց վարանելու ընդունեցէ՛ք զայն: Եթէ ոեւէ մէկը վիրաւորած էք կամ վնասած, գիտակցեցէ՛ք, որ վատ բան ըրած էք, ընդունեցէ՛ք զայն եւ ներողութիւն խնդրեցէ՛ք: Մի լռէք եւ մոռացութեան մատնէք, այլ ուղղակի խոստովանեցէ՛ք:

Անկէ ետք դուք ձեզ շատ աւելի հանգիստ, մաքուր ու վստահ պիտի գգաք: Դիմացիները նոյնպէս աւելի պիտի զնահատէ ատիկա եւ ձեզի աւելի յարգանքով պիտի մօտենայ, քան եթէ դուք ոչինչ ընէիք: Մի ամչնաք սխալներ թող տալէ, ամչցէ՛ք գանոնք ընդունիլ չկարենալէ: Երբ դուք ձեռք բերէք սխալները ընդունելու այդ սովորութիւնը, դուք քայլ մը եւս կ'աճիք ինքնագարգացման եւ յաջողութեան հասնելու ձեր ձանապարհին:

**ՈՒՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԱՍԵՆԱՕԳՏԱԿԱՐ
ՉԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Բոլորին քաջ յայտնի է, որ կաթը կ'ամրացնէ ոսկորները, սոխը օգտակար է պաղաուութեան պարագային, իսկ ստեպլինը կը բարելաւ տեսողութիւնը: Մակայն կը պարզուի, որ կարելի է զօրացնել ուտելիքներու օգտակար յատկութիւնները եւ տարբեր հիւանդութիւններու դէմ անոնց պաշարելու կարողութիւնը, եթէ անոնք ճիշդ համադրէք մէկը միւսին հետ:

12 ամենահզօր համադրութիւնները՝

Ստեպլին+կոճապղպեղ+խնձոր. այս համադրութիւնը կը պահպանէ եւ կը զօրացնէ դիմադրողականութիւնը:

Խնձոր+վարունգ+սեխուր. կը կանխէ քաղցիկը, կը նուազեցնէ քրոնոսթերոլը, կը վերացնէ ստամոքսի խանգարումը եւ գլխացաւը:

Լոլիկ+ստեպլին+խնձոր. կը բարելաւէ մորթին գոյնը եւ կը վերացնէ տհաճ հոտը բերանէն:

Կծու պղպեղ+խնձոր+կաթ. կը կանխէ տհաճ հոտի յառաջացումը բերանէն եւ կ'իջեցնէ ջերմութիւնը:

Նարինջ+կոճապղպեղ+վարունգ. կը

բարելաւէ մորթի գոյնը, կը խոնաւցնէ գայն եւ կ'իջեցնէ ջերմութիւնը:

Անանաս+խնձոր+ամերուկ. կը հանէ աւելորդ աղերը, կը բարելաւէ միզապարկի եւ երիկամներու աշխատանքը:

Խնձոր+վարունգ+քիվի. կը բարելաւէ մաշկին գոյնը եւ կը խոնաւցնէ գայն:

Տանձ եւ պանան. կը կարգաւորէ շաքարի մակարդակը արեան մէջ:

Ստեպլին+խնձոր+տանձ+մանկօ. կը բարձրացնէ մարմնի ներքին ջերմութիւնը, կը պաշարի թոյններու եւ մարմնի թթուացնողութեան դէմ, կ'իջեցնէ արեան ճնշումը:

Խաղող+ամերուկ+կաթ. վիթամին C + վիթամին B2, որոնք կը մեծցնեն բջիջային աշխուժութիւնը եւ կը բարձրացնեն դիմադրողական համակարգը:

Փափայա+անանաս+կաթ. վիթամին C, E, երկաթ: կը բարելաւէ մորթի գոյնը եւ մարսողութիւնը:

Պանան+անանաս+կաթ. հարուստ է վիթամիններով եւ կը կանխէ փորկապոթիւնը:

ՁԿԱՆ ԻԻՂԸ՝ ԿՆՈՋ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՉԱՄԱՐ

Փոքր ժամանակ մեզ յաճախ կը ստիպէին խմել ձկան իւղ: Մենք ատիկա կ'ընէինք առանց հաճոյքի եւ չէինք գիտակցիլ անոր դրական ազդեցութեան: Կը պարզուի, որ ձկան իւղը պէտք է օգտագործեն ոչ միայն փոքրիկները, այլ նաեւ՝ կիները: Անիկա ունի շարք մը առանձնապատկութիւններ, որոնք շատ օգտակար են կիներու համար:

Վիթամին A-ը, որով հարուստ է ձկան իւղը, կը բարելաւէ տեսողութիւնը: Բացի այդ, վիթամին A-ը կ'ամրացնէ երկար մազերը եւ եղունգները: Անիկա նաեւ կը զօրացնէ ակոսներու հմալը:

Ձկան իւղը ունի բնական ծագում՝ գայն կը ստանան ձողաձկան լեարդէն: Անոր մէջ կան շատ հանքային նիւթեր եւ վիթամիններ: Ձկան իւղի ամենակարեւոր բաղադրիչը օմէկա-3 չլիպեցած

ձարաթթուներն են: Ասոնք են ձկան իւղի համատարած օգտագործման պատճառները:

Օմէկա-3-ը ունի հակաօքսիտային ազդեցութիւն, որ կը դանդաղեցնէ մարմնի ծերացման գործընթացը: Մարմինը աւելի դանդաղ կը ծերանայ, մաշկը կը մնայ առաձգական եւ ձիգ, իսկ կանացի գեղեցկութիւնը կը պահպանէ բնական տեսքը: Անիկա դրականորէն կ'ազդէ կիներու արտադրողական համակարգին վրայ եւ յղիութեան ընթացքին կը կարգաւորէ արգանդի վիճակը:

Ձկան իւղի մէջ պարունակուող D վիթամինը շատ օգտակար է յղի կիներու համար, երբ անոնց մօտ կը զգացուի քալցիումի պակաս: Այս վիթամինը կ'օգնէ քալցիումի ներծծման աղիքներուն մէջ եւ կը նուազեցնէ անոր դուրսբերումը մեզի միջոցով:

ՍՏՈՅԳ ՓՈՐՁԱՆՔԻՑ ՓՐԿՈՒԱԾ

Շարունակուած էջ 16-էն

է տալիս իսֆիհանի տարածքում, ուր եկեղեցի է կառուցուում, տարածքը անուանուում է Նոր Ձուղա: Հայ բնակիչները հետզհետէ զարգացնում են իրենց բնակավայրը, սակայն ապահովութիւն չունէին, շրջակայ պարսիկ գիւղերից աւազակախմբեր եւ այլն յարձակուում հայերին նեղացնում էին, թալանում եւ կողոպտում էին: Շահ Աբասը որպէսզի հայերին գերծ պահի այդ հալածանքներից եւ աւազակութիւններից ժողովրդի մէջ տարածեց, թէ՛ հեռու մնացէք հայերից, ոչ յարաբերուէք, ոչ կեր ու խում արէք իրենց հետ, ոչ էլ նրանց ապրանքներին, իրերին ձեռք տուէք, նրանք «պիղծ են» եւ այլակրօն, չենթարկուող մեծ մեղք գործած կը լինի Ալլահի դէմ, իսլամի դրախտին արժանի չի լինի, դժոխք կը գնայ: Այս հոգեբանութիւնը դեռ ի գործ է որոշ յետամնաց եւ ծայրայեղ մարդոց մօտ: Այս քսանմէկերորդ տեսնողութիւնը դարում պէտք է մոռանալ այդ խտրականութիւնները մարդը մարդու նկատմամբ, ապրել մարդասէր, իրար նկատմամբ

հոգատար եւ զօրավիգ, ինչպէս բնութեան տարրերը հաւասարապէս բախում են իրենց բարիքները բոլորին:

Մեր հայերիս համար իրանը երկրորդ հայրենիք է ընդունուել, իրանահայ համայնքը գիտակցորէն չի խնայել իր ծառայութիւնները եւ նուիրուածութիւնները իրանի բարգաւաճման եւ զարգացման համար եւ այսօր էլ նոյն հոգեբանութիւնն է տիրակալ:

Արշակի մարմնի եւ դէմքի վրայ ուռուցիկներ էին առաջացել եւ ցաւեր ունէր, աստիճանաբար առողջութիւնը վերականգնեց, Նաստոյգ մահից փրկուել էր այդ մարդասէր երկաթագծային պաշտօնեացի միջոցով, որը նոյնպէս մոտուումն էր, եւ տեսէ՛ք նրանց եւ սրա միջեւ տարբերութիւնը: Աշխարհը լաւ, գիտակից եւ մարդասէր մարդն է պահում խաղաղ ու կանգուն հեռու կրօնական տարբերութիւններից:

Արշակը ապաքինուելուց յետոյ աշխատանքի անցաւ, աշխատասիրութեամբ եւ պարտաճանաչութեամբ բաւական լուրջ յաջողութիւնների հասաւ:

Սիմոն Մարտիրոսեանը՝ Եւրոպայի Ախոյեան



Ռիո-2016 Օլիմպիական խաղերի փոխախոյեան Սիմոն Մարտիրոսեանը հռչակուեց ծանրամարտի Եւրոպայի 2017թ. ախոյեան՝ նուաճելով առաջին ախոյեանական տիտղոսը մեծահասակների պայքարում:

Խորվաթիայի Սպլիտ քաղաքում անարտած ծանրամարտի Եւրոպայի առաջնութեան 105 կգ քաշային կարգում 20-ամեայ ծանրորդը երկամարտում հաւաքեց 414 կգ (184+230) եւ նուաճեց նաեւ պոկում ու հրում վարժութիւնների ոսկե մետալները:

Սիմոն Մարտիրոսեանը երկամարտում 17 կգ զերազանցեց երկրորդ տեղը զբաղեցրած բուլղարացի Վասիլ Գոսպոլինովին: Աւստրիան ներկայացնող Սարգիս Մարտիրոսեանը 386 կգ (181+205) արդիւնքով գրաւեց չորրորդ տեղը, իսկ Հայաստանի միւս ներկայացուցիչ Մամուէլ Գասպարեանը 7-րդն էր՝ 375 կգ (165+210):

Ռիո-2016 Օլիմպիական փոխախոյեան Գոռ Մինասեանը գրաւեց երկրորդ տեղը, իսկ Ռուբէն Ալեքսանեանը դարձաւ պրոնզէ մետալակիր:

Գոռ Մինասեանը երկամարտում հաւաքեց 446 կգ (211+235) եւ զիջեց միայն Ռիո-2016 Օլիմպիական խաղերի ախոյեան Լաշա Տալխաճեհին, որը պայքարից դուրս էր: Վրացի 23-ամեայ ծանրորդը երկամարտում գրանցեց 467 կգ (217+250), ինչպէս նաեւ աշխարհի ռեկորդ սահմանեց պոկում վարժութիւնում (117 կգ): Ռուբէն Ալեքսանեանը երկամարտում հաւաքեց 434 կգ (190+244): Պոկում վարժութիւնից յետոյ Ալեքսանեանը 6-րդն էր, սակայն հրում վարժութիւնում նուաճեց փոքր պրոնզէ մետալ եւ բարելաւեց զիւրքը երկամարտում:

Աւելի վաղ պրոնզէ մետալ էին նուաճել Սոնա Պօղոսեանը (75 կգ) ու Տաթեւ Յակոբեանը (90 կգ):

Այսպիսով, Հայաստանի թիմը Եւրոպայի առաջնութիւնն անարտեց 5 մետալով եւ թիմային հաշուարկում գրաւեց 5-րդ տեղը:

Արսէն Զուլֆալակեանը Ոսկէ Մետալ է Նուաճել Տալինում

Լոնտոն-2012 Օլիմպիական խաղերի փոխախոյեան Արսէն Զուլֆալակեանը նուաճել է Էստոնիայի մարաթոնային շաքարեղէնի Տալինում անցկացուած էստոնացի լեզենդար ըմբիշ Քրիստիան Պալուսալուի միջազգային 30-րդ յուշամրցաշարի յաղթողի տիտղոսը:



Զուլֆալակեանը պայքարը սկսել է քառորդ եզրափակիչից եւ անցկացրած 3 գոտեմարտերում էլ յաղթել է 8:0 հաշուով: Մեկնարկային փուլում նա ուժեղ է գտնուել նորվեգացի Տիման Շչուանբորնից, յետոյ յաղթել է ամերիկացի Նիկոլաս Տարպլեյին, իսկ եզրափակիչում ոչ մի շանս չի տուել նորվեգացի Պետեր Կարլսենին:

Սա 29-ամեայ Զուլֆալակեանի առաջին մրցաշարն էր նոր մրցաշրջանում:

Յիշեցնենք, որ Արսէն Զուլֆալակեանը չի մասնակցելու Մալթաի 5-7-ը Սերբիայի Նովի Սադ քաղաքում կայանալիք Եւրոպայի առաջնութեանը, որում Հայաստանը կներկայացնեն Գէորգ Ղարիբեանը (59 կգ), Կարեն Ասլանեանը (66 կգ), Ռաֆայէլ Ալեքսանեանը (71 կգ), Կարապետ Զալեանը (75 կգ), Սարգիս Քոչարեանը (80 կգ) եւ Մաքսիմ Մանուկեանը (85 կգ): 98 կգ քաշային կարգում Հայաստանի ներկայացուցիչի անունը յայտնի կը դառնայ Ապրիլի 25-ին:

Իբրահիմովիչի, Մխիթարեանի եւ Ռեշֆորդի Կոլերը Յաղթանակ Բերեցին «Մանչեսթեր Եունայթեդին»



Ֆուտպոլի Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնութեան 32-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» հիւր գնաց «Սանդերլենդին» եւ առաւելութեան հասաւ 3:0 հաշուով: Առաջին խաղակէսում հաշիւը բացեց շուէտ յարձակուող Զլատան Իբրահիմովիչը:

Ընդմիջումից երկու րոպէ առաջ դաշտի տերերը մնացին 10 ֆուտպոլիստներով: Հեռացուեց շուէտ կիսապաշտպան Սեբաստիան Լարսոնը:

Երկրորդ խաղակէսի հենց առաջին րոպէին անհատական վարպետութեան շնորհիւ աչքի ընկաւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը՝ կրկնապատկելով հաշիւը: Նա Լիւկ Շուլի փոխանցումից յետոյ գեղեցիկ անհատական անցումով մտաւ տուգանային հրապարակ եւ միջին տարածութիւնից գրաւեց դարպասի հեռաւոր անկիւնը:

78-րդ րոպէին Մխիթարեանին փոխարինեց ֆրանսացի յարձակուող Անտոնի Մարտիալը: Նախավերջին րոպէին «Մանչեսթեր Եունայթեդը» անգլիացի յարձակուող Մարկուս Ռեշֆորդի կողի շնորհիւ հաշիւը դարձրեց 3:0:

Ժողջ Մոուրիսիոյի գլխաւորած թիմը 57 միաւորով բարձրացաւ 5-րդ տեղ եւ 3 միաւորի առաւելութիւն ունի Լոնտոնի «Արսենալի» նկատմամբ:

«Մանչեսթեր Եունայթեդի» նախկին մարզիչ Դեւիտ Մոյսի գլխաւորած «Սանդերլենդը» 20 միաւորով վերջին տեղում է:

Եւրա Մովսիսեանի Կոլը Ձնածածկ Խաղադաշտում

Ֆուտպոլի հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան 6-րդ տուրում «Ռեալ Սոլթ Լեյքը» տանը 3:0 հաշուով առաւելութեան հասել «Վանկուվեր Վայթքեփսի» նկատմամբ: Դաշտի տերերի կոլերից մէկը 74-րդ րոպէին խփելից Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Եւրա Մովսիսեանը:



«Ռեալ Սոլթ Լեյքը» 5 միաւորով արեւմտեան գոտու 8-րդ տեղում է: 1/8 եզրափակիչի ուղեգիր է տալիս 6-րդ տեղը:

Տիգրան Բարսեղեանի Կոլը Գրեթէ Դաշտի Կեդրոնից

Ֆուտպոլի Մակեդոնիայի առաջնութեան 26-րդ տուրում առաջատար «Վարդարն» ընդունել է «Պելիստերին» եւ պարտութեան է մատնել 3:1 հաշուով: Դաշտի տէրերի երրորդ կոլը 44-րդ րոպէին գրեթէ դաշտի կեդրոնից կատարած հարուածով խփել է Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Տիգրան Բարսեղեանը:

«Վարդարը» գլխաւորում է մրցաշարային աղիւսակը 62 միաւորով եւ 11 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող «Շկենդիայի» նկատմամբ:

Հ.Մ.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԻ ԵՐԿՈՒ ԽՈՒՄԲԵՐՈՆ ՅԱՂԹԱԿԱՆ



Հ.Մ.Մ.Ի Ա. խումբը Կիրակի, 9 Ապրիլ, 2017, Լոս Անճելոսի դաշտի վրայ մրցելով Fc Federal Prism խումբի դէմ արձանագրեց փայլուն յաղթանակ մը, 4-1 արդիւնքով: Հ.Մ.Մ.Ի Բ. խումբը կիսաեզրափակիչ խաղին մրցակից ունենալով Rio Hondo խումբը Կիրակի, Ապրիլ 2017, երեկոյեան ժամը 8:00ին յաղթեց 1-0 արդիւնքով: Իր անարտական խաղը տեղի պիտի ունենայ Կիրակի 23 Ապրիլ, 2017ին կէսօրէ ետք ժամը 3:00ին Pasadena Villa Parkին մէջ, մրցակից ունենալով Real Terrony խումբը: Փափաքելի է որ Հ.Մ.Մ.Ի համակիրներն իրենց ներկայութեամբ քաջալերեն Բ. խումբի անարտական մրցումը:

Պապան Զեր Զամար Մի Բան Կանի

Շարունակուած էջ 2-էն

շնորհակալ եմ նաեւ բոլոր նրանց, ովքեր որ ընդգրկուել են Հայաստանի հանրապետական կուսակցութեան թէ՛ համապետական, թէ՛ ռեյտինգային ցուցակներում եւ իրենց նպաստն են բերել Հանրապետականի յաջողութեանը: Մենք մի ընտանիք ենք, մի միասնական բարեկամական ընտանիք ենք, որ ունի մէկ հայր՝ Սերժ Սարգսեան: Շարմազանով բործել է միւլթարել Աժ չմտած պատգամաւորներին՝ համարեա բաւազի ասելով, որ իրենց բոլորի ամենագոր «պապան»՝ Սերժ Սարգսեանը, մի բան կ'անի, չի թողնի որ իւր օրդիքը դիւրսոր մնան: Իրականում Սերժ Սարգսեանն իսկապէս խորհրդարան չանցած, սակայն կուսակցութեան համար լուրջ ձայներ ապահոված ռեյտինգային թեկնածուների նկատմամբ պարտաւորութիւն ունի: Այս մարդիկ սեփական ֆինանսական ռեսուրսները, վարչական լծակներն ու անձնական կապերը ներդրել են յանուն ՀՀԿ-ի ձայների: Ընդհատ է, քարոզարշաւի ժամանակ նրանք աջակցութիւն են ստացել նաեւ կուսակցութիւնից, սակայն նրանց

ներդրումը հարգատ կուսակցութեան համար իսկապէս մեծ է: Մի կողմից Սերժ Սարգսեանը սկսել է ՀՀԿ-ն փոխելու եւ չխստկայի ենթարկելու գործընթացը, միւս կողմից, սակայն, նոր ՀՀԿ-ականները դուրս ել լուրջ քաղաքական յենարան լինել չեն կարող: Կասկածից դուրս է, որ ՀՀԿ-ի ձայների առիւծի բաժինը ապահովուել են ռեյտինգային թեկնածուները, իսկ մնացած հատուածը՝ վարչական ռեսուրսի շնորհիւ: Եթէ այս մարդիկ իրենց քցուած զգանք, գալիք ընտրութիւններին ՀՀԿ-ն կարող է հենարանի եւ ռեյտինգային թեկնածուների պրոբլեմ ունենալ: Սերժ Սարգսեանը իսկապէս լուրջ խնդրի առաջ է կանգնած. մի կողմից նա պէտք է շարունակի ՀՀԿ-ի չխստկան՝ կուսակցութիւնը առաւելապէս թողնելով նոր կազմերի ազդեցութեան տիրոջութեւ, միւս կողմից նա պէտք է հներին որեւէ կերպ խրախուսելու եւ փոխհատուցելու ձեւ գտնի: Սա կը լինի Սերժ Սարգսեանի ոսկերչական աշխատանքը. նա այս փուլում ամէն մէկին մի բան կը տայ, իսկ կարճ ժամանակ անց իրեն յատուկ ոճով կը գտնի այդ նոյն մարդկանց ցտեսութիւն ասելու ձեւը:

«ՀԱՅԵԼԻ»

Shawd Իրավիճակ Սերժ Սարգսեանի Զամար

Շարունակուած էջ 2-էն

է դատավճռի: Նախորդ ընտրութիւնների պարագայում թուում է թէ աւելի կոշտ գեկուլյցներում այսպիսի գնահատական չէր լինում, եւ արեւմտյան հանրութիւնը Հայաստանի հետ աշխատանքի տեղ էր թողնում: Ներկայում էլ պատրաստակամութիւն է յայտնուում շարունակել Հայաստանի հետ համագործակցութիւնը, սակայն իրավիճակներն են արդէն տարբեր: Ի՞նչ հետեւանքներ սա կարող է ունենալ Հայաստանի հետ յարաբերութիւններում: Հայաստանն արդէն իսկ քաղաքական համակարգի «ջանքերի» արդիւնքում գիջել է իր ինքնիշխանութիւնը տարբեր

ուղորտներում՝ տնտեսութիւն, անվտանգութիւն եւ այլն: Արեւմտեան գործընկերները նախընտրական շրջանում զգուշացնում էին այս հանգամանքը, յայտարարելով, որ կողոպտիւն իր բոլոր դրսեւորումներով ազդում է երկրի ինքնիշխանութեան ու անվտանգութեան վրայ: Ինչպէ՞ս են վերաբերում այն երկրին, որի ոչ միայն իշխանութիւնն է միջազգայնօրէն հայտարարում կողոպտացում, այլեւ փաստացի ժողովուրդը: Ինչպէ՞ս է դա անդրադառնում տնտեսութեան ու անվտանգութեան, միջազգային յարաբերութիւնների վրա: Միջազգային քաղաքական պրակտիկայում օրինակներ շատ կան:

«ԼՐԱԳԻՐ»

ԵՐԱՇՇՏԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՅԱՅՏԱԳԻՐ

Շարունակուած էջ 13-էն

պարածեանը, Նուրհան Մանուկեանն ու Թամար Գալսէրլեանը, իսկ Մաթակ Թուրիկեանի, Պերճուհի Պէրպէրեանի, Քրիստոս Քարանայանի, Կարինէ Չուպուքեան Պողբորդի, էլի Պէրպէրեանի եւ Պօղոս Եղիազարի յանձնուեցան յուշանուէրներ: Ժաշկերոյթի գագաթնակէտն էր, թեմակալ Առաջնորդ Գեղշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեանի խնդրանքին ընդառաջ, Պոլսահայ Օգնութեան Միութեան վարչութեան երկարամեայ ատենապետուհի Տիգրան Թամար Գալսէրլեանի Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ շնորհուած Օրհնութեան Գիրքը, գոր կարդաց Հոգշ. Տ. Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան: Նորին Սրբութիւնը ի մէջ այլոց կը գրէր. »Հայրապետի համար անկեղծ գոհունակութիւն է, որ Դուք որպէս Պոսահայ Օգնութեան Միութեան վարչութեան Ատենապետուհի, տաննակ տարիներ գովարժան աւանդ էք բերում Միութեան աստուածահանոյ առաքելութեանը: Ազգասէր ու եկեղեցասէր հայրդեացի նուիրեալ ջանքերով Պոլսահայ Օգնութեան Միութիւնը մեծ արգասաւորութեամբ ծառայում է մեր ժողովրդին եւ շարունակում առաւել հարստացնել իր ինն-

սուսամեայ գործունէութեան վաստակը կրթական, մշակութային ու բարեխրական ծրագրեր իրականացնելով Միացեալ Նահանգներում, պոլսահայ աւանդաշատ համայնքում եւ հայրենի մեր երկրում: . . . Ազգային կեանքում Ձեր գովարժան վաստակը, եկեղեցաշէն նախաձեռնութիւնների իրականացմանը բերած աւանդը Ձեզ արժանացրել են մեր եկեղեցականաց եւ հաւատաւոր հայրդեացի ջերմ սիրուն ու յարգանքին:» Տիգրան Գալսէրլեան իր շնորհակալութեան արտայայտութեանց մէջ հակիրճ պատմականը ըրաւ Պոլսահայ Օգնութեան Միութեան: Տարեդարձի ձաշկերոյթի աւարտին՝ Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքը յայտնեց եւ ի մէջ այլոց ըսաւ. » Կը շնորհաւորեմ Պոլսահայ Օգնութեան Միութեան 90-ամեակը: Երբ ես Միացեալ Նահանգներ եկայ եւ հովուական պաշտօն վարեցի, եղա Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ, Առաջնորդի Փոխանորդ եւ Առաջնորդ՝ վաշկեցի Պոլսահայ Միութեան անմիջական համագործակցութիւնը գանազան ձեռնարկներու կազմակերպման առիթով, որուն համար կը յայտնեմ իմ խորին գնահատանքս», եւ բարեմաղթութիւններով ու արթնքով փակեց օրուան հանդիսութիւնը:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՁԵՌՆԱՐԿ

Շարունակուած էջ 13-էն

րու վարժարանին մէջ, արժանանալով դպրոցի եւ կառավարական պաշտօնեաներու գնահատագրերուն: Տիգրան Մարիէթա Անասեանի մեծագոյն ներդրումը եղաւ մեր գագաթնի ներս, իր ամուսինին եւ գաղութի պարծանքը հանդիսացող, «Սիփան» երգչախումբի մենակատար երգչուհի եւ վարչական գործերու անման կազմակերպիչը ԸԼԼալով: Մարիէթա Անասեան իր հեզահամբոյր բնաւորութեամբ, շէն ու շէնշող խառնուքով, իր առինքնող անհատականութեամբ ելոյթներ ունեցած Լոս Անճելոսի, Նիւ Եորք, Պոստոն, Շիքահո եւ Աւստրալիայի մէջ, եւ անշուշտ Հայաստանի երիտասարդական ճամբարներու եւ ծանօթ սրահներում մէջ: Ան «Սիփան» երգչախումբին հետ միասին չորս անգամ Հայաստան մեկնած է եւ իրենց ելոյթներով հմայած են Հայաստանի խոտապահանջ արուեստասէր հասարակութիւնը: Իսկ Լոս Անճելոսի մէջ ուր որ կարիքը եղած է, յատկապէս եկեղեցիներու մէջ, ան սկաւտի պէս պատրաստ եկեղեցի գացած է եւ երգով իր նպաստը բերած է արարողութեանց: Ան ոչ միայն իր թանկագին ամուսինի աջ եւ ձախ բազումն է, այլ «Սիփան» երգչախումբի բոլոր անդամներուն սիրելի Մարիէթան է, որուն հանդէպ երգչախումբին բոլոր անդամները անպառ եւ անսահման սէր եւ յարգանք ունին: 1989-ին ընդառաջելով մեր հրաւերին, Տիգրան Մարիէթա Անասեան միացաւ իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութեան ԱՆՎՃԱՐ շաբաթօրեայ վարժարանին, իր կամաւոր նպաստը բերելով ազգապահ-

պանման եւ ազգաշինութեան մեր սուրբ գործին: 28 տարի մեր յարգելի մեծարեալը բազմահարիւր փոքրիկներու հայ երգ ու երաժշտութիւն սորվեցուցած է կամաւորաբար: Երգի պահը, ոչ միայն աշակերտութեան, այլ վարժարանի, վարչականներու եւ Մտղա-ուսուցչական մարմնի ամէնին սպասուած կէս ժամն է, ուր բոլորը կը հաւաքուին աշակերտութեան հետ, Տիգրան Մարիէթա Անասեանին հետ երգելու համար: Մեր դպրոցի դրամահաւաքի ձեռնարկներուն ան հոն է եւ իր ելոյթներով եւ խմբերգներով կը ձոխացնէ մեր ձեռնարկները: Ամալները եւ տօնական օրերու հանդէսներուն մեր երգի թանկագին ուսուցչուհին՝ Տիգրան Մարիէթա Անասեանի կազմակերպութեամբ հոյակապ ձեռնարկներ եղած են: Սիփանի հայ ուսուցիչը հայ մտաւորականին չափ թանկագին եւ անփոխարինելի է: Արուեստագէտ ԸԼԼալը շատ մեծ արժանիք մըն է, բայց հայ դպրոցի երգի ուսուցիչ ԸԼԼալը կրկնակի պատիւ եւ արժանիք մըն է, իսկ հայ մայր եւ ուսուցիչ ԸԼԼալը առաքինութեանց մեծագոյնն է: Սրտանց կը շնորհաւորենք սիպար մայր, հայ արուեստագիտուհի եւ մեր երգի թանկագին ուսուցչուհին՝ Տիգրան Մարիէթա Անասեանը: Կը խոնարհինք Ձեր երկար տարիներու բազմաբեղուն վաստակախ առաջը, Ձեզի ըսելով. — Շնորհակալութիւն 28 տարիներու Ձեր կամաւոր ծառայութեանց համար իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութեան վարժարանին ներս: Ձեր վարձքը հազար կատար ԸԼԼալ, մշակ բարի եւ պատուարժան:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ 1060 North Allen Ave Pasadena, CA 91104 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

Save Support Sustain SYRIAN ARMENIAN RELIEF FUND Syrian Armenian Relief Fund P.O. Box 1948 Glendale, CA 91209-1948 www.syrianarmenianrelieffund.org

MARCH FOR JUSTICE

ARMENIAN GENOCIDE

Արդարութեան
Քայլարշակ

Pan Pacific
Park

Genesee Ave.



3rd St.

Fairfax ave.



Wilshire Blvd.

Turkish
Consulate

April 24 @ 12 PM

START: 7600 Beverly Blvd.
Մեկնում Los Angeles

march4justice.com

Buses leave at 11:30AM from:

Հանրակարգեր մեկնում են 11:30ին

Glendale

St Mary's Church 500 S. Central Ave.
St Gregory Catholic Church 1510 E. Mountain Ave
Armenian Nazarene Church 411 E. Acacia Ave.

Burbank

St Leon's Cathedral 3325 N. Glenoaks Blvd

La Crescenta

Crescenta Valley Community Center 2633 Honolulu Ave.
Crescenta Valley Church 6252 Honolulu Ave.

Pasadena

St Gregory Armenian Church 2215 E. Colorado Blvd.
AGBU High School 2495 E. Mountain St
Pasadena Armenian Center 2242 E. Foothill Blvd.

Montebello

Holy Cross Cathedral 900 W. Lincoln Ave.

Hollywood

St Garabed Church 1614 N. Alexandria Ave.

North Hollywood

Merdinian School 13330 Riverside Dr.

Encino

Holy Martyrs School 16617 Parthenia St
Holy Martyrs Church 5300 White Oak Ave

Canoga Park/Van Nuys

AGBU Marie Manoogian School 6844 Oakdale Ave.
St Peter's Armenian Church 17231 Sherman Way

Bus reservations and more information / Փոխադրամիջոց ապահովել և հաւելեալ տեղեկութիւն



888-924-1915

